




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



V

ՏԱՐԱԲԱՂԴՆ Մ Ո Ւ Մ Ա

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ ՅԱՆԳԼԻԱՐԷՆԷ

ՕՐ. ՆՈՒԱՐԴ Յ. ԷՍԱԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԻՔ ՕՐԱԿՐՈՑ

1887

V. Hissarlian
Guzumtcharchi bachi N. 10
CONSTANTINOPLE

733304

Ա.Ն.

Ազնուագուծ եւ սիրելի Հայր իմ
Յովհաննէս Էֆէնտի Էսսեան

Թոյլ տուիր ինձ, Հայր իմ, ամանորոյ առ-
թիւ Քեզ նուիրելիք փոքրիկ Թարգմանածոյ
մէկ աշխատութիւնս ի լոյս ընծայել՝ զիս աւելի
օգտակար եւ աւելի գեղեցիկ երկասիրու-
թեանց խրախուսելու համար յառաջիկային
մէջ, եւ փափագեցար որ անոր վաճառմանէն
գոյացած հասոյթը յատկանայ Ազգային Հի-
ւանդանոցի Որբոց :

Նրանի՛ թէ՛ Հայր սիրելի՛ աւելի կարեւոր
գործերով կարենամ օր մը փոխարինել Քո ինձ
ցուցած անբաւ գորովը եւ խնամքը եւ միշտ
Քեզ արժանի դուստր մնամ :

Դուստր Քո բոլորանուէր
Ն. Յ. ԷՍՍԵԱՆ

Բերա, 1887 Յունուար 1



7333 Բ

ՏԱՐԱԲԱՂԴՆ ՄՈՒՍԱ

Ա.

Ծանօթ է արդէն թէ Աֆղանաց Սուլթանը կ'ախորժի գիշերը ծպտեալ պտըտել Քապուլի փողոցներէն, ինչպէս Հարուն էլլաշիտ խալիֆայն սովոր էր ընել ի Պաղատտ : Այսպէս լուսնով գիշեր մը իւր փոխարքային հետ կ'անցնէր Քապուլի զանազան գլխաւոր փողոցներէն՝ առանց նշանաւոր բան մը տեսնելու : Վերջապէս մինչդեռ կ'անցնէին չուանամանի մը քովէն, Սուլթանը յիշեց Խօճա Հասան Ալհապալ չուանամանն եւ իւր երկու բարեկամաց Սաատ եւ Սաատիի պատմութիւնը որք այնչափ տարբեր էին իրենց կարծեաց մէջ բաղդին ազդեցութեանը վրայով մարդկային գործոց մէջ :

«Ի՞նչ է կարծիքդ այս նիւթիս վրայ՝ ըսաւ թաղաւորն իւր փոխարքային : — Հակամէտ եմ կարծելու, եթէ Զ. Վ. եան անհաճոյ չէ-պատասխանեց փոխարքայն, թէ յաջողութիւնն աշխարհիս վրայ աւելի խոհեմութեան արդիւնք է քան բաղդ կամ ճակատագիր կոչուածին : — Իսկ ես, ըսաւ Սուլթանը, համոզուած եմ

թէ բաղդն աւելի գործ կը տեսնէ մարդոց համար, քան խոհեմութիւնը: Չե՞ս լսեր որ ամէն օր կըսեն թէ մարդիկ բաղդաւոր են կամ անբաղդ են: Ի՞նչպէս կրնայ ըլլալ որ այդ կարծիքը մարդոց մէջ տիրէ, եթէ փորձով հաստատեալ չըլլայ: — Ինձ չվայլեր հակաճառել Ձեր վեհափառութեան հետ՝ պատասխանեց խոհեմ փոխարքայն: — Ըսէ կարծիքդ համարձակ. այդպէս կը փափաքիմ եւ ի հարկին կը հրամայեմ գլայն, ըսաւ Սուլթանը: — Եթէ այդպէս է, իմ կարծիքս պատասխանեց փոխարքայն, այս է թէ մարդիկ շատ անգամ կը հաւատան այլոց բաղդաւոր կամ տարաբաղդ ըլլալուն, որովհետեւ միայն անոնց պատմութեան հարեւանցի գծերն կը ճանչնան եւ չգիտեն այն դէպքերն եւ իրողութիւններն ուր ցուցէր են խոհեմութիւն կամ անխոհեմութիւն: Իմացեր եմ որ կան հիմայ, քաղքիս մէջ, երկու արք որ նշանաւոր են իրենց բարի եւ չար բաղդով, մին կը կոչուի Տարաբաղդն Մուսա, միւսը Սալահէտտին Բաղդաւորն: Հիմայ ինձ կը թուի որ, եթէ կարենայինք իմանալ իրենց պատմութիւնը՝ պիտի գտնէինք որ մին խոհեմ եւ միւսն անխոհեմ բնաւորութեան տէր է: — «Ո՞ր կը բնակին այդ մարդիկ, ընդմիջեց Սուլթանը. պիտի իմանամ իրենց պատմութիւնն իրենց իսկ բերանէն, պառկելէս առաջ՝ Տարաբաղդն Մուսա կը բնակի գիմացի փողոցն ըսաւ փոխարքայն:»

Սուլթանը փափաքեցաւ երթալ այնտեղ

անմիջապէս: Հազիւ փողոցն կը մտնէին, լսեցին բարձր աղիւղում ճիչեր: Չայնին ետեւէն գացին մինչեւ որ եկան տան մ'առաջ որու դուռը բաց էր եւ ուր կար մարդ մը որ կը պատուտէր իւր փաթիթոցը դառնապէս լալով: Հարցուցին իրեն իւր յուզման պատճառը, եւ նա ցուցուց Չինի անօթի մը բեկորքը, որ իւր դրանն առջեւ գետնասփիւռ կային: «Կ'երեւի թէ այս գեղեցիկ չինի անօթ մ'է, ըսաւ Սուլթանը վերցնելով կտորուանքն, բայց կրնայ արդեօք չինի ամանի մը կորուստը պատճառ ըլլալ այսքան դառն ողբոց եւ յուսահատութեան:»

«Ա՛հ, պարոնայք, ըսաւ անօթին տէրը, դաղբեցնելով իւր ողբերը, եւ նայելով կեղծ վաճառականաց հազուստին, կը տեսնեմ թէ օտարական էք եւ չէք գիտեր որչափ տարաբաղդ մարդու մը հետ կը խօսիք: Եթէ իմանայիք ինձ պատահած բոլոր ձախող արկածները, ծնելուս վայրկենէն մինչեւ ցայսօր, թերեւս կարեկցէիք ինձ եւ ճանչնայիք որ յիրուի պատճառ ունիմ յուսահատելու:» Սաստիկ հետաքրքրութիւն ցուցուց Սուլթանն, եւ համակրութեան արժանանալու յոյսը գրգեց զՄուսա անոր իզճը կատարելու իւր արկածից պատմութեամբ: «Տեսաք, ըսաւ, հազիւ կը համարձակիմ հրաւիրել զձեզ ինձ չափ տարաբաղդ մարդու մը տուն. բայց եթէ յօժարիք գիշեր մ'օթել բնակարանիս մէջ, պիտի իմանաք տեղն ի տեղ իմ աղետիցս պատմութիւնը:» Սուլթանն եւ փոխարքայն ներում

խնդրեցին եւ հրաժարեցան այն գիշերն անցնելու Մուսայի հետ, ըսելով թէ պարտաւորուած էին երթալու իրենց խանն ուր իրենց ընկերք իրենց կ'ապասէին. բայց թոյլտուութիւն խնդրեցին յողնութիւն առնելու կէս ժամի չափ իւր տունը, եւ աղաչեցին իրեն որ սկսի իւր կենսագրութիւնն՝ եթէ անով չէին նորոգեր իւր վշտերն եւ իւր տարաբաղբութեանց յիշատակը: Քիչ մնալով կայ այնչափ անտարբեր որ իւր ունեցած կամ ունենալ կարծած ձախողութեանց վրայ խօսիլ չախորժի կարեկցութիւն վատակելու յուսով:

Հազիւ թէ կարծեցեալ վաճառականք նըստեցան, Մուսա սկսաւ իւր պատմութիւնն հետեւեալ կերպով: «Հայրս Քապուլի մեծ վաճառականներէն մին էր. իմ ծննդեանս նախընթաց գիշերն, երազեց որ աշխարհ եկեր եմ շանաղլուս եւ վիշապատտուն, եւ սքօղելու համար իմ տձեւութիւնս՝ զիս պատատեց բուրդէ լաթի մը մէջ, որ դժբաղդարար մեր Վեհափառ իշխանին փաթթոցն էր: Իշխանը զայրանալով հօրս յանդգնութեան վրայ՝ որ իր փաթթոցին ձեռք դնած էր, հրամայեց որ գլխատեն զնա: Հայրս արթնցաւ գլուխը կորողնցնելէն առաջ, բայց ոչ առանց խելքին կէսն կորսնցունելու իւր տարախելի երազէն: Մորհեցաւ թէ այս երկնառաք խրատ մ'էր եւ հետեւապէս որոշեց խորշիլ իմ տեսքէս:

Չուզեց կենալ տեսնելու համար թէ յիշալի արդեօք շանապուկ եւ վիշապատտում

պիտի ծնիմ, եւ ուղեւորեցաւ յաջորդ առաւօտուն պէս ի Քանդահար:

Այս բացակայութիւնն եօթը տարիէ աւելի տեւեց եւ այդ միջոցին իմ կրթութիւնս բոլորովին բարձի թողի մնաց: Օր մը մօրս հարցուցի թէ ինչո՞ւ զիս կոչէր էին Տարաբաղբն Մուսա: Ինձ ըսաւ թէ այդ անունն ինձ տրուէր էր հօրս երազին պատճառաւ, բայց յաւելցուց թէ թերեւս պիտի մոռցուի այն՝ եթէ բաղդաւոր երեւիմ ապագայ կենացս մէջ: Դայեակս շատ տարեւոր կին մը, որ ներկայ էր, երբեցուց իւր գլուխն այնպիսի նայուածքով մը զոր բնաւ չը պիտի մոռնամ եւ պատասխանեց մօրս բաւական բարձրաձայն որ կարենամ լսել: «Տարաբաղբ էր, եւ է՝ ե պիտի ըլլայ ամէն ատեն: Անոնք որ չարարատիկ ծնած են չեն կրնար օգտակար լինել իրենց անձին, յաջող բան չեն կրնար ընել. ե ոչ խակ երկինս որ զօրութիւնք կրնան փոխել անոնց ձախատագիրն: Յիմարութիւն է թշուառին իւր բաղբին դէմ մնալուի: Ուստի լաւ է որ յանձն առնու զիջանել խկոյն անոր առջեւ»: Այս խօսքն անջինջ տպաւորութիւն մ'ըրաւ իմ վրաս: Դեռ մտառով էի, եւ ամէն դէպք որ ինձ յետոյ կը պատահէին, հաստատեցին իմ հաստաքս դայեակին գուշակութեանց վրայ: Ութամեայ էի երբ հայրս վերադարձաւ իւր գաւլըստեան յաջորդ տարին Սալահէտովն եղբայրս ծնաւ, որ կոչուեցաւ Բաղդաւորն Սալահէտին, որովհետեւ ծնած օրը, նաւ մը՝ հա-

րուստ վաճառքներով բեռնարարած՝ հասաւ ան-
փնաս նաւահանգիստը : Ձձեզ չճանճրացնեմ
այն ամէն յաջող դիպաց մանրամասնութեամբ
որովք Սալահէտին եղբայրս նշանաւոր հանդի-
սացաւ , իւր մանկութեան միջոցին : Որչափ
տարիքը կ'առնէր այնչափ իւր յաջողութեամբ
ամէն բանի մէջ նշանաւոր կ'ըլլար՝ որչափ ես
իմ ձախողութեամբքս ամէն ձեռնարկներուս
մէջ : Այն բազմազան շաւուր հասնելէն ի վեր
պերճութեամբ կ'ապրէինք , եւ հօրս գործոց
կարծեցեալ յաջողութիւնը բնականապէս Սա-
լահէտին եղբորս երջանիկ ճակատագրին ազ-
դեցութեանն կը վերագրուէր : Երբ Սալահէ-
տին քսանամեայ էր , հայրս ծանր հիւանդ ին-
կաւ , եւ որովհետեւ կ'զգար թէ չը պիտի ա-
պաքինի , կանչեց եղբայրս իւր անկողին քով
եւ՝ ո՛վ զարմանք , յայտնեց իրեն թէ այն շքե-
ղութիւնն յորում կ'ապրէինք իւր ստացուածքն
սպառեր էր , թէ իւր գործերն ամենամեծ
խառնակութեան մէջ էին , վասն զի անընդհատ
յաջողութեանց հաւատալուն , թեւակոխեր էր
իւր կարողութենէ վեր ձեռնարկութեանց . ա-
սոր հետեւանքն էր , թէ բան մնացած չէր իւր
որդւոց համար , այլ միայն երկու մեծ Ձինի
անօթներ՝ իրենց գեղեցկութեամբ նշանաւոր ,
բայց ալ աւելի նշանաւոր վրանին արձանա-
գրեալ անծանօթ տառերով քանի մը տողերուն
պատճառաւ , որոց համար կրտէին թէ բժժանք
մը կամ հմայ կը պարուենակեն որ կը ներգոր-
ծէր ի նպաստ իրենց ստացողաց :

Այդ երկու ամաններն ալ հայրս յանձնեց
Սալահէտին եղբորս յայտնելով թէ ինձ անոնց
եւ ոչ մին կրնար փտահիլ , որովհետեւ այն-
չափ տարապաղը էի որ անպատճառ զայն պի-
տի կոտրէի : Սակայն իւր մահուանէն վերջը
Սալահէտին եղբայրս , որ վեհանձն բնաւորու-
թեամբ մը օժտեալ էր , ձգեց ինձ երկու անօ-
թոց ընտրութիւնն , եւ ջանաց զիս սրտապնդե-
լու ըսելով թէ չէր հաւատար բարի կամ չար
բաղդին :

Ձէի կրնար իրեն համարկարծիք ըլլալ այս
մասին՝ բայց զգացի եւ ճանչցայ իւր բարե-
սրբութիւնը որով կը ջանար ախօփել զիս իմ
արմատացեալ թաղծութենէս : Գիտէի թէ պա-
րապ բան էր բաղդս փորձել , որովհետեւ ա-
պահով էի թէ ինչ ալ բնեմ , պիտի մնամ Տա-
րարաղդն Մուսա : Եղբայրս ընդհակառակն
բնաւ չէր վճատէր հօրս զմեզ թողած աղքա-
տութեան վիճակէն : Ըսաւ թէ կրնար միջոց
մը գտնել ինքզինքը պահպանելու եւ այնպէս
ըրաւ : Զննելով մեր Ձինի անօթներն , մէջը
գտաւ բաց բոսորագոյն փոշի մը եւ մտածեց
որ կրնայ գեղեցիկ ներկ մ'ըլլալ : Փորձեց զայն
եւ քիչ մը աշխատութենէ վերջը , կատարելա-
պէս յաջողեցաւ : Հօրս կենդանութեան ատեն ,
մայրս հարուստ հանդերձներ չինել տուած էր
այն վաճառականաց միոյն ձեռամբ որ արքու-
նական բամբջաց գործակատարքն էին : Եղ-
բայրս այն վաճառականին քանի մը չնչին ծա-
ծայութիւն մատուցեր էր . ասոր վրայ ինքն

ալ անմիջապէս խոստացաւ նոր բոտորագոյնը համարուելու։ Այնքան գեղեցիկ էր գոյնը որ տեսնողը նախապատիւ կը համարէր բոլոր միւս գոյնոց։ Սալահեատինի խանութն անմիջապէս լեցուեցաւ գերձակներով, եւ անոր յանկուցիչ ձեւերն եւ ակորժելի խօսակցութիւնն իրեն աւելի օգտակար եղան քան իւր բոտոր գոյնը։ Ընդհակառակն, դիտեցի որ առաջին նայուածքն իմ թաղձագին կեցուածքիս վրայ բաւական էր ուժացնելու ինչ զիս տեսնողը։ Դիտեցի զայն եւ աւելի հաստատեցայ կարծեացս մէջ իմ չար ճակատագրիս վրայով։

Օր մը հանդիպեցաւ որ տիկին մը, հարուստ հագուած՝ երկու նաժշտով ուղեկցեալ, եկաւ եղբորս խանութն քանի մը բան գնելու։ Դուրան էր ինք եւ ես մինակ էի խանութն անոր սպասելով։ Քանի մը բան նայելէն վերջն ուղեց տեսնել նաեւ Չինական անօթս որ սենեակն էր։ Սքանչանօք զարնուեցաւ անոր, եւ ընծայեց ինձ ինչ գին որ ուզեմ եթէ յանձն առնում անկէ զրկուիլ։ Բայց այդ չուզեցի ընել, որովհետեւ կը կարծէի թէ գլխուս վրայ պիտի գան ահաւոր աղետք, եթէ կամօքս յանձնեմ այդ բրձ-ժանքը։ Իմ մերժելուս վրայ բարկացաւ տիկինը եւ ըստ իւր սեռին սովորութեան, աւելի յամառեցաւ իւր դիտաւորութեան մէջ. բայց ոչ խօսք ոչ դրամ կրցան փոխել տալ միտքս։ Չափէն աւելի զայրացած իմ յամառութեանս վրայ՝ ինչպէս որ զայն կը կոչէր՝ տնէն ելաւ գնաց։ Եղբորս վերադարձին՝ պատմեցի իրեն եղածն,

եւ կարծեցի որ պիտի գովէ խոհեմութիւնս, բայց ընդհակառակն զիս դարձեց այն նախապաշարեալ արժանեաց համար զոր կուտայի անօթիս քերթուածին, եւ դիտեց որ կատարեալ յիմարութիւն մ'էր հարստութեան ստոյգ միջոց մը կորսնցնելը դիւթական պաշտպանութեան մը երկրացելի յուսոյն համար։ Չկրցայ իրեն համակարծիք ըլլալ, եւ չհամարձակեցայ հետեւելու իւր տուած խրատին։ Յաջորդ օրը տիկինը վերադարձաւ եւ եղբայրս ծախեց իւր անօթն տասը հազար ոսկոյ։ Այս դրամը գործածեց ամենաշահաւոր կերպով, գնելով նոր վաճառաց մթեր մը։ Ես ալ զգնացի՝ բայց ուշ էր, սակայն ենթադրեցի թէ այն ալ ճակատագրին մէկ հրամանն է որ ոմանք չեն կրնար ուղիղ որոշում մը տալ պատեհ ժամանակին։ Առիթը կորսուելէն վերջը միշտ զգջացած եմ ըրածիս ճիշդ հակառակն ըրած չըլլալուս։ Շատ անգամ երկմտելու վայրկենիս, յարմար առեւնը կանցնէր։ Բայց պատմութեանս թելը չընդհատեմ։ Տիկինը որ գնեց Սալահեատին եղբորս անօթն՝ իշխանին սիրականն էր, եւ ապարանից մէջ լիազօր։ Իրեն բաղձանաց հակառակելուս համար ինձ դէմ զգացած հակակրանքն այնքան սաստիկ էր, որ այլ եւս չուզեց վերադառնալ եղբորս տունը, եթէ ես հոն մնայի։

Եղբայրս չէր ուզեր ինձմէ զատուիլ, բայց չուզեցի այդչափ բարի եղբոր մը կործանման պատճառ ըլլալ։ Առանց դիտաւորութիւնս իրեն յայտնելու, ձգեցի իւր տունը, փոյթ չը-

նեղով թէ ինչ պիտի պատահի ինձ : Սակայն անօթութիւնը շուտ ստիպեց զիս անմիջական միջոց մը խորհելու դիւր եւ սխալի գտնելու համար : Նստեցայ քարի մը վրայ , փռագործի մը խանութին դրան առջեւ . տաք հացին հոտին չը դիմանալով ներս մտայ եւ նուաղ ձայնով ողորմութիւն խնդրեցի : Փռագործը տըռաւ ինձ որչափ հաց որ կրնայի ուտել , այն պայմանաւ որ իրեն հետ հազուստս փոխեմ եւ նկանակները կրեմ քաղքին մէջ նոյն օրը : Ասոր անմիջապէս հաւանեցայ . բայց իրաւունք ունեցայ զղջալու մարդահաճութեանս վրայ : Յիրաւի եթէ ձախող բաղդս ըստ սովորութեան զրկած չ'ըլլար զիս՝ այդ տազնապող վայրկեանին մէջ՝ յիշողութենէս եւ դատողութենէս՝ բնաւ չպիտի հաւանէի փռագործին նենգաւոր առաջարկութեան : Քանի մ'առնէն առաջ Քապուլի ժողովուրդը շատ դժգոհ եղած էր փռագործներուն տուած հացին տեսակէն եւ քանակէն : Այս տեսակ դժկամակութիւնն խռովութեան մը աներկբայ նշանակն է , եւ այս յուզմանց միջոցին , փռագործք շատ անգամ կեանքերնին կը կորսնցնէն : Գիտէի այս բոլոր պարագայները , բայց ինձ օգտակար եղած ժամանակին միտքս չ'եկան :

Փռագործին հետ հազուստ փոխեցի , բայց հազիւ թէ կը յառաջնայի մերձաւոր փողոցներէն միոյն մէջ նկանակներովս , խաժամութեամբ բոլորաբար խոնեցաւ կշտամբանօք եւ նզովիւք :

Ամբոխը հալածեց զիս մինչեւ արքունական պալատին դուռը , եւ փոխարքայն իրենց կատաղութենէն տարտախելով , հրաման հանեց գլուխս կտրելու , սովորական դեղն այսպիսի պարագայից մէջ փռագործին գլխատուան ըլլալով : Ծուռկի ինկայ , աղբրապէս կրկնելով թէ ես չէի փռագործն , ինչպէս կը կարծէին , թէ բնաւ անոր հետ առնչութիւն մը չ'ունէի , եւ թէ չէի տուած բնաւ Քապուլի ժողովրդեան հաց մ'որ արդար կշիռը չ'ունենար : Յայտնեցի թէ հազուստ փոխեր էի փռագործի մը հետ այն օրուան համար , եւ թէ այդ այդպէս բնիւս ալ չար ճակատագրիս բերմամբն էր՝ որ կը տնօրինէր բոլոր գործերս : Խաժամութէն քանի մը հոգի աղաղակեցին թէ արժանի էի գլխատութեան խենթութեանս համար , բայց այլք վրաս մեղքեան եւ մինչդեռ փոխարքային հրամանը կատարելու համար զրկուած սպայն դարձաւ քանի մը խօսք ըսելու աղմկալից ապստամբներուն՝ անոնք որ տարաբաղդութեանս կարեկցեր էին ինձ ճամբայ բացին տախտէն դուրս եւ առնոց շնորհիւ կրցայ կատարել փախուստս : Զրդեցի Քապուլ քաղքն յանձնելով անօթս եղբօրս խնամոց : Քանի մը մղոն քաղքէն հեռու , զորաց խմբի մը պատահելով , իրենց հետ խառնուեցայ եւ խմացայ որ նաւ մտնելու վրայ էին Սուլթանին բանակին մնացորդին հետ Հնդկաստան երթալու համար : Միտքս դրի իրենց ընկերանալ :

Եթէ երկնից կամքն է որ կորսուիմ՝ լաւ է

կ'ըսէի՝ որ կանուխ հանդիպիմ ճակատագրին : Վհատութիւնն յորում ինկած էի այնքան մեծ թուլութեան մէջ ընկղմած էր զիս որ հագիւ պէտք եղածը կ'ուռէի կեանքս պահպանելու համար : Հնդկաստանն անցնելու համար նստեցայ բոլոր օրը նաւուն տախտակամանին վրայ , ծխախոզը բերանս , եւ ապահով եմ որ եթէ փոթորիկ մ'եւէր՝ ծխախոզս բերանէս չէի հաներ , եւ ոչ խակ չուան մը կ'առնէի ինքզինքս աղատելու փորձ փորձելու համար : Այնպէս է այն տեսակ մը համակամութեան կամ թմբութեան արդիւնքը , ինչպէս ուղեք զայն կոչեցէք՝ որու զիս վերածեր էր իմ տարաբաղդութեանս վրայ ունեցած անդրդուելի հանդուսն : Սակայն ցամաք ելանք , անվրաս՝ հակառակ իմ ձախող դուշակութեանցս : Դուզնաքեայ պատճառաւ մը՝ զոր պատմել ինկ չ'արժեր՝ ընկերներէս ետ մնացի նաւուն մէջ եւ յետոյ ցամաք ելլելով բանակատեղը ուշ հասայ գիշերը : Լուսին կար , որով կրնայի տեսնել բոլոր տեսարանը : Բազմաթիւ մանր վրձններ կանգնած կային ցիր եւ ցան՝ ճերմակ աւազի տնապատի մը մէջ . բանի մ'արմաւենի տեսանելի էին քիչ մը հեռուն . ամէն բան մթին էր , եւ ամէն բան խաղաղ , ոչ մի ձայն կը լսուէր բայց միայն ուղտերուն ոռնալն , որ վրաններուն քով կ'արածէին , եւ երբ յառաջ կ'երթայի մարդու մը չի հանդիպեցայ :


Ծխախոզս մարած էր եւ արագեցի քայլերս դէպ ի խարսիկ մը , զոր տեսայ վրաններ-

րուն միայն քով : Երբ կ'առաջանայի , աչքիս զարկաւ բան մ'որ աւազին մէջ միայլ կ'արձակէր . մատնի մ'էր : Գետնէն առի , եւ մատիս վրայ անցունելով՝ միտքս դրի միւս առաւօտ մունետիկ մը հանել , որ գտնէ բնիկ տէրը . բայց չար բաղդէս , պղտիկ մատիս անցուցի մատնին՝ որուն համար շատ մեծ էր , եւ երբ կը փութայի դէպ ի կրակը ծխախոզս վառելու համար , մատնին մատէս ինկաւ . ծռեցայ զայն բնտեղու խոտի դէղի մը մէջ ուր ջրի մը վը ճարակէր . անիծեալ կենդանին այնքան սաստիկ կից մը արձակեց գլխուս , որ չը կրցայ ինքզինքս արգիլել աղաղակելէ : Վայնաստունս արթնցուց զանոնք որ կը քնանային այն վրանին տակ որոյ քով ջրին կ'արած էր : Իրենց անհանգիստ ըլլալուն վրայ զայրանալով զինուորները պատրաստ էին հետս չարաչար վարուելու եւ զիս գող մը համարեցան որ գողցեր էի այն մատնին զոր գտած ըլլալ կը պահանջէի : Մատնին բռնի ձեռքէս խլեցին , եւ յաջորդ օրը գանալով եղայ զայն գտնելուս համար . իրենք այնպէս կը համարէին թէ ձեռք զիս պիտի խոստովանեցունէ թէ ո'ւր պահեր եմ ուրիշ արժէքով ապրանքներ , որոնք կորսուեր էին բռնակին մէջ : Այս բոլոր բաները՝ ծխախոզս վառելու համար ցուցած աճապարանացս եւ մատնին շատ փոքր մատի մը վրայ դրած ըլլալուս հետեւանքն էին : Տարաբաղդն Մուսայէն զատ ո'չ ոք թշուառի բան մը կրնար ընել :

Երբ կարող եղայ պարտելու նորէն , վեր-

քերս բուժեւէն վերջը , գացի վրաններուն մի-
ոյն մէջ որ կարմիր դեօշակով մը կը տարբերէր
միւսներէն , վասն զի ինձ բտեր էին թէ ագոնք
սրճատուններ են : Երբ սուրճ կը խմէի , լսեցի
օտարական մը որ կը գանգատէր թէ կարող ե-
ղած չէր գտնելու մեծ արժէք ունեցող մատնի
մը զոր կորսնցուցեր էր : Թէպէտեւ իւր կորուստը
հրատարակէր էր , երեք մունետիկներով , եր-
կու հարիւր ոսկի վարձք խոստանալով գտնո-
ղին : Հասկցայ թէ այս մատնին դժբաղդարար
իմ գտածս էր : Օտարականին մօտեցայ , եւ
խոստացայ իրեն ցուցնելու այն մարդը որ զայն
աւեր էր ձեռքէս :

Օտարականը գտաւ իւր մատնին եւ համո-
զուելով որ պարկեշտութեամբ վարուեր էի ,
ինձ երկու հարիւր ոսկի պարգեւեց իրեն փո-
խարինութիւն այն պատժին զոր յանիրաւի կը-
րեր էի իւր պատճառաւ : Հիմա պիտի կարծէք
թէ այս ոսկւոյ գումարն ինձ շահաւէտ եղաւ .
ընդհակառակն , նորանոր դժբաղդութեանց
աղբիւր եղաւ : Գիշեր մը , երբ ինձ կը թուէր
թէ հետս միեւնոյն վրանին մէջ գտնուող զի-
նուորներն ի քուն ընկղմեալ էին , հաճոյք ըզ-
գացի գանձս համբելու : Յաջորդ օրը հրախրե-
ցայ ընկերներէս իրենց հետ օջառակ մը խմելու :
Ինչ խառնեցին խմած օջառակին մէջ , չը գի-
տեմ , բայց չը կրցայ զխմողիւ վրաս կոխած
թմրութեան : Խոր քնոյ մէջ ընկայ , եւ երբ
արթնցայ ինքզինքս ընկողմանեալ գտայ ար-
մաւենւոյ մը ստորատը , քիչ մը հեռու բանա-



կատեղէն : Առաջին յիշածս՝ երբ ուշաբերեցի՝
ոսկւոյ քսակս էր : Քսակն անվնաս գտայ գո-
տեցս մէջ , բայց զայն բանալով , տեսայ որ
գայլախաղով լեցուն էր եւ ոչ մէկ ոսկի կար
մէջը :

Ջը տարակուսեցայ որ կողոպտեր էին զիս
զինուորք որոց հետ օջառակը խմեր էի , եւ ա-
պահով եմ որ անոնցմէ մի քանին արթուն ըլ-
լալու էին գիշերն ստակս համբելու առեն . ա-
պա թէ ոչ՝ ամենեւին մէկուն հարստութեանս
զաւրանիքը պատմած չ'ըլլալուս՝ բնաւ չէր կըր-
նար անցնիլ անոնց մտքէն թէ տէր ըլլամ այս-
պիսի գումարի մը , որովհետեւ իրենց հետ ըն-
կերանալէս ի վեր մեծ չքաւորութեան մէջ գըտ-
նուիլ կը ցուցնէի :

Պարսպ տեղ գիմեցի բարձրատիճան սպա-
յից գողերը գտնելու համար : Զինուորները
բողբեցին թէ անմեղ էին . ոչ մէկ ակներեւ
ապացոյց կար իրենց դէմ , եւ բան մը չը վաս-
տըկեցայ բողբելէս բայց միայն ծաղր եւ չա-
րակամութիւն : Կսկծիս առաջին զայրութիւն
մէջ այն անուամբ կոչեցի զիս զոր Հէրաթ գա-
լէս ի վեր խորշեր էի արտաբերելէ . ինքզինքս
կոչեցի Տարաքաղղն Մուսա : Անունն եւ պատ-
մութիւնը բերնէ բերան չըլեցան բանակին մէջ :
Անկից վերջը շատ անգամ շատերն այս ա-
նուամբ զիս կը դիմաւորէին : Ոմանք ալ մակա-
նուն փոխելով՝ Գայլախաղի քսակով Մուսա կը
յորջորջէին զիս : Այս բոլոր կրածներս բանս մը
չ'էն բաղդատելով յաջորդ դժբաղդութեանցս :

Սովորութիւն էր այն ատեն Աֆղան բանակին մէջ, որ զինուորք կը զբօսնուին նշան առնելով: Բարձրաստիճան սպայք այս վտանգաւոր պարապմունքէմ շատ կը մաքառէին, բայց ի դուր: Երբեմն զինուորաց խմբեակ մը կը դադրեցնէր հրաձգութիւնս, քանի մը վայրկեան. բայց իրենց հրաման գալէն քիչ մը վերջը, նորէն կ'սկսէին, անարգելով ամէն պատուէր: Այնչափ էր կարգապահութեան պակասութիւնը մեր բանակատեղւոյն մէջ, որ այսպիսի անհնազանդութիւն մը անպատու հաս կ'անցնէր: Նոյն միջոցին վտանգին յաճախութեան վարժուելով շատ մարդ անիոյթ եղած էր այս բանին: Տեսած եմ զնտակներով ծակծկած վրաններ, որոց մէջ խումբ մը զինուորք՝ բոլորովին անտարբեր՝ ծխախոզնին իրենց բերնէն վար չէին տռներ: Այս անզգայութիւնն ունաց համար մարմնաց աննուաճ հեղգութեանէն յառաջ կուգար՝ այլոց համար ծխին և ափիոնին յառաջ բերած թոյնէն, բայց իմ Աֆղան եղբարցս շատերուն համար կը ծագէր այն վտանգութեանէն զոր նախասահմանութեան հաւատքն առնոց կը ներշնչէր:

Երբ գնտակ մը կը մեռցունէր իրենց ընկերներէն մին՝ այս զխտորութիւնն միայն կ'ընէին, հազիւ իրենց ծխախոզներն բերաններնէն վար տռնելով՝ «Մեր ժամը գեռ չը հասաւ. երկնից կամքն չէ տակաւին որ մեռնինք:» Կը խոստովանիմ որ այս յանդուգն ապահովութիւնն ինձ առաջ տարօրինակ թուեցաւ, բայց քիչ ատենէն

ես ալ սովորեցայ և մանաւանդ թէ հաստատեցայ ալ իմ բնիկ կարծեացս մէջ թէ ոմանք ծներ են բարեբաստիկ և այլք չարարաստ:

Ընկերներուս պէս անգութ եղայ. անոնց նման իմաստասիրելով խորհեցայ թէ մարդկային խոհեմութիւնն անկարող էր ճակատագրին հարուածներն յետս դարձնելու: Գուցէ վաղը մեռնիմ, թող ինձ ուրեմն զուարճանալ այսօր:

Այլ եւս ամէն օր ինձ գործը ըրի հայկեայթեւու որչափ զուարճութիւն կարելի էր: Աղքատութիւնս, ինչպէս որ կը մտածէք զիս, ծայրայեղ շուայտութենէ զերծ պահեց. բայց շատ չանցած միջոց մը դառայ կարողութեանէս շատ ծախսելու: Կային քանի մը հրեայք որ բանակին ետեւէն կ'երթային, և որ հաշիւներն մեր զօրաց յաղթող ելլելու հաւանականութեան վրայ հիմնելով զինուորներուն ստակ փոխ կուտային չափազանց տոկոսեաց խոստումներ տուելով անոնցմէ:

Այն հրեայն որուն ես գիտեցի՝ ինձ հետ գործի մտաւ այն վտանգութեամբ որ Սալահէտին եղբայրս, որուն բնաւորութիւնն եւ պարագայքը կը ճանչէր՝ պարտքերս կը վճարէր եթէ մեռնելու ըլլայի: Հրէէն առած ստակովս, ամէն ատեն սուրճ և ափիոն կը խմէի որուն յանչափս դակասէր էի: Անոր ազգած ցնորքով բոլոր տարաբաղութիւններս, ապագայի ամէն երկիւղ կը վարատէին մտքէս: Օր մը երբ միտքս բորբոքէր էր անսովոր չափով ափիոնով՝ կ'աստանդէի բանակատեղւոյն մէջ, մերթ եր-

գեղով, մերթ ցատկելով, խենդի նման և կրք-
նելով որ այլ ևս ես չեի Տարաբաղըն Մուսա :
Երբ այս խօսքերը չրթանցս վրայ էին, բար-
եացակամ հանդիսատես մը, որոյ խելքը գլու-
խըն էր, բռնեց զիս թեւէս և ջանաց առնել
տանիլ զիս կեցած տեղէս : «Ձե՛ս տեսներ՝ կ'ը-
սէր, այս զինւորներն որ նշան կ'առնեն : Տե-
սայ անոնցմէ մին, որ ճիշդ այս վայրկենիս
փաթթոցիդ նշան կ'առնէր :» Անգգամ բազդս
յաղթահարեց այդ վայրկենին ալ՝ կենացս մի-
ակ վայրկեանը յորում իւր կարողութիւնն կ'ան-
գոսնէի : Կուռեցայ խրատաւորս դէմ, կրկնե-
լով «Ես քու կարծած թշուառդ չեմ. Տարա-
բաղըն Մուսան ես չեմ :» Ինք խոյս տուաւ վը-
տանգէն. ես մնացի և քանի մը բոպէ վերջը
գնտակ մը հասաւ և անզոյ թաւաղեց զիս ա-
ւաղին վրայ :

Անճարակ վերաբոյժ մը գնտակը վերքէն հա-
նեց և ինձ հարկ եղածէն տաճնապատիկ աւելի
տանջանք պատճառեց : Մասնաւորապէս շտա-
պած էր, այդ միջոցին, որովհետեւ ճիշտ բա-
նակը հրաման ընդունէր էր քանի մը ժամէն
ճամբայ ելլելու և ամէն ինչ խառնակութեան
մէջ էր բանակատեղւոյն մէջ : Վէրքս սոսկալի
ցաւ կը պատճառէր, և երկիւղը որ չըլլայ թէ
ետ թողուիմ անոնց քով որ անբուժելի կար-
ծուած էին՝ տաղնապս կը յաւելուր : Կարելի է
եթէ հանդարտ տեղս կենայի, գլխուս չէին
գար այն չարիք զոր քաշեցի վերջը, բայց ինչ-
պէս որ ձեզ ըսի՝ պարոնայք, չար բազդս զիս

անկարող կ'ընէր, հասկնալու թէ ինչ էր ամե-
նէն աղէկ ընելիք բանն, մինչեւ որ խոհեմու-
թեան ժամանակն այլ ևս անցած չըլլայ : Այդ
օրը, երբ տենդս յետին աստիճանի զայրացած
էր, և երբ ինձ բժիշկը պատուէր տուած էր
անկողին մնալու, հակառակ իմ բնաբոյս յու-
լութեանս, ելայ հարիւր անգամ մը վրանէն
դուրս օրուան ամենէն հրատապ միջոցին հե-
տաքրքրութիւնս յագեցնելու համար՝ թէ արդ-
եօք քանի՜ վրան տակաւին քակուած չէին եւ
ո՛րչափ զինւորք դեռ չէն մեկնած : Չուելու
հրամանները գանդաղութեամբ կը կատարուէ-
ին, և շատ ժամանակ անցաւ մեր բանակին
ճամբայ ելլելէն առաջ :

Եթէ վերաբուժին հրամաններուն մօտիկ ը-
րած ըլլայի՝ կարելի պիտի ըլլար ինձ ընկերա-
նալ վիրաւորաց ամենէն յետնամնացներուն՝
կամ թերեւս պիտի կրնայի տոկալ պատգարակի
մը յամր չարժմանց, որով քանի մը հիւանդք
տեղափոխուած էին. բայց երեկոյին երբ վիրա-
բոյժն եկաւ վէրքս դարմանելու, զիս գտաւ
այնպիսի կացութեան մը մէջ որ անկարելի էր
տեղէս երեքալ :

Փափաքեցաւ որ խումբ մը զինուորք, որ
թողուեր էին վերջապահ գնդին ուղեկցելու
համար՝ զիս հետերնին տանին յաջորդ առա-
ւօտուն : Այնպէս ալ եղաւ բայց զինւորք
ուղեցին զիս դնել այն ջրուոյն վրայ որ կը յի-
շէի կանըկին մէկ ճերմակ բժէն՝ թէ այն անիծ-
եալ կենդանին էր որ ինձ կից մ'արձակէր էր

մատնին բնառելու ատեն : Ձը կրցան համոզել զիս որ այս չարագոյթ կենդանւոյն վրայ հեծնեմ : Ես ջանացի համոզելու զինուորները որ զիս իրենք կրեն . բաւական տեղ տարին ալ , բայց քիչ ատենէն յոգնելով իրենց բռնէն , զիս աւազին վրայ ընկողմանեցին ըսելով որ պիտի երթան ջուր լեցնեն մորթի մը մէջ մերձաւոր աղբիւրէ մը , և ինձ հրամայեցին որ հանդարտ կենամ տեղս , և իրենց վերադարձին սպասեմ : Սպասեցի՝ տպանեցի՝ ծարաւակէզ կարօտելով ջրոյն՝ պատակեալ չրթունքս թրջելու համար . բայց ոչ ջուրն եկաւ , ոչ զինուորք վերադարձան , և հոն ժամերով մնացի վայրկեանէ վայրկեան սպասելով որ յետին շունչս արձակեմ :

Ձբրի ջանք մ'անդամ երեւալու համար , որովհետեւ համոզուած էի թէ ժամս եկեր էր և թէ երկնից կամքն էր որ կորսուիմ այսպէս լքեալ և անոք , և շան պէս անթաղ մնամ : Այսպիսի մահ մը , մտածեցի , արժանի է Տարաբաղըն Մուսայի : Գուշակութիւններս այս անգամ ի դերեւ ելան : Անգղիացի զօրաց փաշտ մ'անցաւ պառկած տեղիս քովէն , հեծեծանքս լսեցին , և մարդասիրաբար օգնութեանս եկան : Ձիս կրեցին իրենց ուսոց վրայ , վէրքս բռնեցին և ինձ հետ շատ քաղցրութեամբ վարուեցան . թէեւ այլաիրօն էին այլ ճանցոյ թէ իրաւունք ունիմ զանոնք աւելի սիրելու քան իմ ընկերներս , բարի եղբայրս ի բաց առնելով : Իրենց խնամօք կազդուրեցայ , բայց հագիւ թէ ուժս վրաս եկեր էր՝ նոր աղետից մէջ ինկայ :

Օղբ ատամիկ տաք էր , և ծարաւս կիզիչ . մեկնեցայ խուփը մը զինուորներով , ջուր գտնելու յուսով : Անգղիացիք սկսան փորել՝ ակն մը գտնելու համար , իրենց գիտուններէն միոյն ցուցած տեղը : Յօժար չէի այգքան խիստ դործոյ մը , և նախամեծար համարեցայ ուրիշ տեղ ակն մը բնառելու : Տեսայ քիչ մը հեռուէն բան մը որ ճահիճ մ'ըլլալ կ'երեւար , և զայն ցցուցի ընկերացս : Իրենց գիտուն մարդն ինձ խնայուց իւր թարգմանովը որ չը հաւատամ՝ այդ խարերաց երեւութին , որ շատ սովորական էր այդ երկրին մէջ , և թէ երբ այն հողին քով երթամ , ջուր պիտի չը գտնեմ հոն : Ըսաւ եւս թէ իմ կարծածէս շատ աւելի հեռու էր այն ճահիճը , և թէ հաւանօրէն , պիտի կորսուէի անտպատին մէջ եթէ փորձէի հետամուտ ըլլալ այդ երեւութին :

Այնչափ չարանսէ էի որ շանացի այս խորհրդին , գուրս վազեցի՝ հետամուտ այս անիծեալ ցնորքին ետեւէն , որ տոռաղիւ չար ողեսաց գործն էր , որ ամպոտեցին խելքս , և իրենց սահմանաց մէջ յանկուցին : Յառաջ գացի , ժամէ ժամ ակնկանելով բաղձանացս առարկային հասնելու . բայց կը փախչէր այնչափ արագ որչափ ես շուտ կը վազէի , և խելամուտ եղայ վերջապէս թէ Անգղիացին՝ որ անտարակոյս երկրին մարդիկներէն այդ ծանօթութիւնն ոտացեր էր՝ ճշմարտութեամբ էր և թէ այն չողջողուն տեղքը , որ ջուր կարծեր էի՝ անտի պատրանք մ'էր : Յոգնութենէ ոգետալու եղած

էի . վայրագար ետիս նայեցայ ձգած ընկերներս տեսնելու համար . չը կրցայ տեսնել ոչ մարդ , ոչ կենդանի , ոչ բնականութեան հետք մը այդ աւազուտ անապատին մէջ : Ուրիշ ճար չունէի , Ակեալ ըլլալով հանդերձ , բայց եթէ յետս ընդ կրունկն վերադառնալ աւագին վրայ դրօշմեալ հետքերս դիտելով : Տրտում տխուր զանոնք առաջնորդ առի ինձ այդ անծանօթ երկրին մէջ , փոխանակ տեղի տալու իմ հեղգ բնութեանս :

Պարտ էր ինձ սակայն ամէն ճիգն թափել ետ նահանջելու գիշերուան քամին չընչած : Զգացի անոր փշելը , և անդէտ ինչպիսի վտանգի մէջ գտնուելուս , ուրախացայ , եւ ծոցս բացի հովահրելու համար : Բայց ինչ եղաւ սարսափս , երբ տեսայ որ հովը կը ջնջէ քայլիցս հետքն աւագին վրայ : Զը գիտէի ո՞ր ճամբէն երթալիքս և յուսահատութիւնը վրաս տիրեց . հանդերձներս պատուեցի , մէկդի նետեցի փաթթոցս , և կ'աղաղակէի բարձրածայն , բայց ոչ մէկ մարդկային ձայն ինձ կը պատասխանէր և ոչ արձագանք մը . լռութիւնն ահարկու էր : Անսուաղ էի շատ ժամերէ հետէ . նըւաղեալ ծիւրեալ ինկայ : Յիշեցի որ դրեր էի ամբիոնի կողոր մը փաթթոցիս մէկ կողմը , բայց աւաղ , երբ փաթթոցս հանեցի տեսայ որ ամբիոնն ինկեր էր : Պարտաւ տեղ զայն փնտռեցի փաթթոցս նետած տեղս : Պառկեցայ գետնին վրայ , և չար ճակատագրիս տեղի տուի առանց մրցելու : Որչափ տառապեցայ ծարաւէ , անօ-

թութենէ , տաքէն , աննկարագրելի է : Վերջապէս ինկայ տեսակ մը հիացման մէջ , և ազդի ազդի պատկերներ կ'ընդոստնուին կը սահէին աչացս առջեւ : Որչափ ատեն մնացի այս վիճակիս մէջ , չը գիտեմ , բայց կը յիշեմ թէ սթափեցայ բարձրածայն աղաղակէ մը որ կուգար ուխտաւորաց կարավանէ մը : Ուրախութեան աղաղակ մ'էր իրենց անմեծա հասնելուն համար քաջածանօթ աղբիւրի մը մօտ անապատին այդ կողմերը : Աղբիւրը հարիւր կանգուն հեռու չէր պառկած տեղէս և սակայն , այնպիսի էր Տարաբաղըն Մուսայի ճակատագիրը , որ իրականութենէ զուրկ մնաց՝ մինչդեռ ժամերով երեւոյթին ետեւէն թափառեր էր : Նըւաղեալ և շնչասպառ կրցածիս չափ բարձր ճիւղ մ'արձակեցի , օգնութիւն գտնելու յուսով , և Զանացի սողալ երթալ դէպի այն տեղն ուսկից ձայնը կը թուէր գալ : Կարաւանը կեցաւ շատ ատեն մինչեւ որ գերիները լեցընեն ջրոյ տիկերը . գետնաքարէ կը դիմէի դէպի իրենց , սակայն ամէն Զանիւքս հանդերձ համոզուած էի թէ , սովորական չար բաղդովս , կարող չը պիտի ըլլամ իրենց լսելի ընել տալու ձայնս : Տեսայ որ ուղտերնուն վրայ կ'եւլէին . հանեցի փաթթոցս , պարզեցի և ճօճեցի օդին մէջ : Նըւանս տեսնուեցաւ : Կարաւանը դէպի ինձ եկաւ : Հազիւ թէ կարողութիւն ունէի խօսելու . գերի մը ինձ ջուր ջամբեց , և խմելէս վերջը իրենց պատմեցի ով ըլլալս , և ինչպէս այդ կացութեան հասնիլս : Մինչդեռ կը խօսէի ճամ-

բորդներէն մին զիսեց գօտիէս կախուած քըսակը՝ որ նոյն խակ վաճառականին տուած քսակն երբ մատնին գտայ. զգուշութեամբ պահած էի զայն, որովհետեւ բարերարիս անուան սկզբնատառքն և բարոյական քերդուած մը վրան բանուած էին: Ձայն ինձ տալու միջոցին ըսած էր թէ, թերեւս նորէն տեսնուինք աշխարհիս ուրիշ մէկ կողմը, և զիս ճանչնայ այգքսակով: Այն մարդը որ հիմայ քսակը կը տեսնէր այն վաճառականին եղբայրն էր: և երբ պատմեցի ինչպէս զայն ստանալս, հաճեցաւ զիս խոր պաշտպանութեան տակ առնուլ: Ինք ալ վաճառական մ'էր, որ կ'երթար կարավանով մը գէպի Հէրաթ. ինձ առաջարկեց զիս իրեն հետ տանելու և յօժարութեամբ ընդունեցայ իւր առաջարկին, խոստանալով իրեն ծառայել իւր գերեաց պէս հաւատարմարար: Կառավարը ճամբայ ելաւ և ես անոր ուղեկցեցայ:

Բ.

Այն վաճառականն, որ հիմայ տէրս էր, ինձ հետ շատ քաղցրութեամբ վարուեցաւ, բայց խմանալով այն տարաբաղդ դիպումս մեր ամբողջ շարքը գոր պատմեք էի, ինձմէ խօսքստաւ որ գործ մը չը պիտի ընեմ իրեն հետ չխորհրդակցած. «Եթէ այնչտի Տարաբաղդ ես,

Թուսա՝ լուս, որ ամէն ստեն կ'ընտրես յոռեգոյնն երբ քեզ համար ընտրութիւն մ'ընել հարկ ըլլայ, ամբողջովին հաւատարու էիր քեզմէ աւելի զգօն կամ աւելի բարեբաղդ բարեկամի մը դատողութեան:» Բարեկցիկ էի այս վաճառականին ծառայութեան մէջ, որ հեզահամբոյր մարդ մ'էր եւ այնքան հարուստ որ կրնար վեհանձնութեամբ վարուիլ իւր բոլոր չըջակացից հետ:

Իմ գործս էր տեսնել իւր ուղտուց բեռնաորեւրը կամ բեռները վար առնուլն յարմար ստենին, համբել իւր վաճառաց հակերը, եւ զգուշանալ որ չը խառնուին իւր ուղեկցաց հակերուն հետ: Այս գործս զգուշութեամբ կ'ընէի, մինչեւ որ Կալիպիտ հասանք, ուր տարաբաղդարար մուցայ հակերն համբել, բնաւ չերկբայելով թէ ճիշտ էին, ինչպէս որ գտեր էի զանոնք նախորդ օրը: Սակայն երբ նաւսիտի մանկինք ճամբանիս շարունակելու համար, զիսեցի որ երեք հակ կորսուեր էին: Վաղեցի տիրոջ ազգարարելու, որ թէպէտ շատ զկծեցաւ այլ զիս չյանդիմանեց ըստ արժանւոյն անհոգութեան համար: Անմիջապէս մոռնետիկ մը դրկուեցաւ քաղքին մէջ, վարձք խոստանալով վաճառքը գտնողին: Մեր ուղեկից վաճառականաց դերիններէն միոյն ձեռամբ մեր ապրանքն մեր ձեռքն հասաւ: Նաւք հիմայ առադատողից կ'երթար, տէրս՝ ես և հակերն պարտաւորեցանք անոր ետեւէն երթալու հասնելու մակուկով մը, եւ երբ նաւ հասանք,

նաւապետն յայտնեց թէ այնքան բեռնաւոր-
եալ էր նաւը որ չէր կրնար ինձ ըսել թէ ուր
կարելի էր զետեղել մեր հակերը : Շատ դժ-
ուարութենէ վերջ, հաւանեցաւ զանոնք ձգե-
լու տախտակամածին վրայ, եւ խոտաղաց տի-
րօջս անոնց վրայ հսկել գիշեր եւ ցերեկ :

Յաջող ճամբորդութիւն մ'ունեցանք եւ կը
նշմարէինք ցամաքը, որուն՝ կրտէր նաւապետը՝
անվրէպ պիտի հասնէինք յաջորդ առաւօտուն :
Սովորականին պէս, գիշերը տախտակամածին
վրայ մնացի, զրօնելով ծխափողս քաշելու :
Բանակատեղին մէջ գտնուելէս ի վեր՝ ուր այս
ունակութեամբ վարակեր էի, չէի կրնար ապ-
րիլ ասիտն կամ ծուխ չը ծխելով : Կարծեմ
միտքս քիչ մը ամպոտած էր չափն անցուցած
ըլլալովս : Երանկարձ դէպ ի կէս գիշեր՝ սարսա-
փէս սթափեցայ : Յատկեցի տախտակամածէն
ուր պառկեր էի : Ժաթթոցս բռնկած էր, հա-
կը՝ որուն վրայ կեցէր էի՝ ամբողջ կը բորբոքէր :
Արթնցուցի երկու նաւատի որ խոր կը քնա-
նային տախտակամածին վրայ : սրտաբեկու-
թիւնն ընդհանուր եղաւ, եւ շփոթութիւնն
աւելցուց վտանգն : Նաւապետն եւ տէրս ամե-
նէն գործօն էին, եւ շատ նեղութիւն քաշեցին
մարելու համար կրակը : Տէրս սոսկալի կերպով
մորթեղերձ եղաւ : Ինձ համար, չը ձգեցին որ
բան մ'ընեմ : Նաւապետը հրամայեց որ զիս
կայմին կապեն, եւ երբ վերջապէս հրդեհը մա-
րեցաւ՝ ճամբորդներն ամէնքը միախորհուրդ,
խնդրեցին որ կապած պահեն զիս ձեռքերս եւ

ոտքերս որ նոր աղետից ալ առիթ չըլլամ :
Ի՞նչ ըսեմ : այս բոլոր պատահարք պատճառ-
ուեցան իմ ձախող բաղէս : Ծխափողս ձեռ-
քէս ինկեր էր՝ երբ քունս կը տանէր՝ քովս ե-
ղած հակին վրայ : Ծխափողիս կրակէն բամ-
բակը բռնկեցաւ : Այնքան էր նաւատեաց
զգացած կատաղութեամբ խառն սարսափը՝ որ
ապահով եմ թէ զիս կը ձգէին ամայի կղզւոյ մը
վրայ՝ եթէ չարաթ մ'ալ աւելի իրենց հետ
պահել հարկ ըլլար : Նոյն իսկ գթասիրտ տէրս,
գիտեցի, գաղտնապէս անհամբեր էր ազատելու
Տարաբաղը Մուսայէն եւ իւր նահէն : Տարակոյս
չունիք որ ի բոլոր սրտէ գոհ եղայ երբ ցամաք
ելայ եւ կապանքս քակեցին : Տէրս ձեռքս դրաւ
քսակ մը, որ կը պարունանէր յիսուն ոսկի, եւ
հրաժեշտ առաւ ինձմէ, «Գործածէ այդ արծա-
թը խոհեմութեամբ, Մուսա, եթէ կրնաս, ը-
սաւ, եւ կարելի է բաղդդ փոխուի» : Այն բանին
յոյս չունէի : Սկսայ աստանդիլ քաղքին փողոց-
ներուն մէջ, մտածելով թէ ինչպէս կրնամ յիսուն
ոսկիս ամենէն շահաւոր կերպով գործածել :
Մարդ մը որ զիս յանուանէ կը կանչէր՝ կեցուց
զիս, եւ ինձ կը հարցունէր թէ արդեօք կը կեղ-
ծեմ իւր դէմքը մոռցած ըլլալ : Աչքս վրան սե-
ւեռեցի, եւ ցաւօք յիշեցի թէ Բաղդադ հրեայն
էր, որմէ դրամ փոխ առած էի բանակատեղը :
Ի՞նչ էր զինքը բերողը՝ եթէ ոչ իմ չար ճակա-
տագիրս : Չուզեց զիս ձգել, չուզեց անմեղադ-
րութիւնս ընդունիլ, ըսաւ թէ գիտէր որ երկու
անգամ դատաւիք եղած էի, անդամ մը Ափղան

բանակէն եւ անդամ մը Անդղիացի բանակէն, թէ ուժիկ մը չունէի առնելիք եւ թէ չէր կըրնար խորհիլ որ Սալահէտտին եղբայրս զիս ուզէ ճանչել կամ պարտքերս վճարել: Պատասխանեցի՝ որովհետեւ զայրացած էի հրեային լըբութեան դէմ՝ թէ իւր կարծածին պէս մտաբացիկ մը չէի՝ այլ կարողութիւն ունէի վճարելու ճիշդ պարտքերս, բայց կը յուսայի թէ պիտի չպահանջէ այն սոսկալի տոկոսը զոր միայն վաշխառու մը կրնայ խնդրել: Ժպտեցաւ եւ ինձ պատասխանեց որ եթէ Աֆղանք ասիրոնն աւելի կը սիրեն քան թէ արծաթը, իւր յանցանքն չէր, թէ ինձ տուեր էր ինչ որ ամենէն շատ սիրածս էր աշխարհիս վրայ, եւ թէ տըրտունջներու չէի, երբ կ'սպասէր որ ըրածին փոխարէնն ընդունի:

Ձեզք չը ձանձրացնեմ, տեսաք, բոլոր ձեռնարկութեանց մանրամասնութեամբ որ Բաղուպի եւ իմ մէջ տեղի ունեցան: Վերջապէս գործըն անայշ տեղ կապեցինք: չուզեց առնուլ ամբողջ պարտքէն ոչինչ նուազ, բայց ինձ ձեռք շատ աժան սակով ձեռք մը գործածուած լաթեր, որով զիս ապահովեցուց թէ բաղդս կըրնամ շինել: Զանոնք բերած էր Հէրաթ, ըսաւ, ծախելու համար գերեաց վաճառականի մը որ տարուան այն միջոցին մէջ կ'ուզէին զանոնք իրենց աղախանաց նուիրելու համար: Բայց շտապի մէջ էր իւր կնոջն եւ ընտանեաց երթալու ի Քապուէ, ուստի կը փախաքէր բարեկամի մը տալ իւր այս չահագիւրութեան վատտակն:

Կուրօրէն հաւատալու չէի Բաղուպին բարեկամութեան հաւատեաց, եւ մասնաւորապէս անշահաւորութեանը, բայց զիս իրեն հետ այն օթեւանը տարաւ, ուր դրած էր իւր ասլաւանքներն, եւ բացաւ հազուադէպ մտուելը զանոնք ինձ ցըցունելու: Ամենահարուստ եւ ամենազեղեցիկ նիւթերէ շինուած էին եւ քիչ գործածուած: չկրցայ կասկածիլ իմ ալ զգայարանացս վկայութեան վրայ: սակարկութիւնը եղրակացաւ, եւ Հրեայն բեռնակիրներով արկղը դրկեց պանդոկս: Միւս օրն նորէն երեւցայ շուկայն եւ երբ ունեցած ապրանքս խմացուեցաւ, զիշեր չեղած յաճախորդները շուրջս առին: արկղն պարապ էր եւ քսակս լեցուն:

Ըրած չահս այս հազուատներս ծախելով, այնքան մեծ էր, որ չը կրցայ խելք հասցնել թէ ինչ պատճառաւ Բաղուպ զանոնք այնչափ շուտ ձեռքէ հանած էր: Արկղիս պարունակութիւնը վաճառելէ քանի մ'օր վերջը, Դամասկոսի վաճառական մը, որ ինձմէ երկու ձեռք լաթ առեր էր, ըսաւ ինձ, շատ թաղծագին երեսով մը՝ որ երկու աղաղխներն որ դրեր էին այս հազուատներն՝ հիւանդ ինկած էին: Չկրցայ ըմբռնել որ հազուատներն իրենց հիւանդութեան պատճառն եղած ըլլան, բայց անմիջապէս վերջը երբ շուկայէն կ'անցնէի, առնուաղն տասներկու վաճառական վրաս յարձակեցան, նոյն տրտունջներն ընելով: Ոտք կը կորէին զխոնալու թէ ինչպէս այս լաթերուն տէր եղած էի, եւ ինձ հարցուցին եթէ անոնցմէ

մին ես ալ գործածեր եմ: Այն օրն առաջին անգամ ըլլալով գործածեր էի զայդ մը դեղին մոյկեր, միակ վաճառքն զոր ինձ սեփականեր էի ամբողջ այդ ակնաստիղ վաճառքներէն: Համազունքով իմ այս մոյկերը գործածելէս թէ նենգաւոր դիտաւորութիւն մը չունէի, որովհետեւ ես ալ վտանգին կը մասնակցէի, ինչ որ ըլլար, վաճառականներն քիչ մը հանդարտեցան. բայց ինչ եղաւ վախս եւ խղճի խայթս միւս օրը, երբ իրենցմէ մին եկաւ ինձ տեղեկացնելու թէ ժանտախտի ուռեցք պայթեր էին բոլոր այն լաթերը գործածող աղաղոց անթին տակ: Զգուշութեամբ նայելով արկղին ամէն կողմը, գտան Զմիւռնիա անունը գրուած, եւ կէս մ'աւրած կախարչին վրայ: Ժանտախտն ատենէ մ'ի վեր Զմիւռնիոյ մէջ ճարակեր էր, եւ ինչպէս որ այդ վաճառականք կը կասկածէին. այս հազուատներն անտարակոյս սրածութենէ մեռած մարդկանց կը վերարելէին: Այս էր պատճառն որու համար հրեայն այնքան աժան ծախեց ինձ. եւ այդ պատճառին համար էր որ շէր ուզեր կենալ ի Հէրաթ իւր շահագիտութեան օգուտներն ձեռք բերելու: Յիրաւի եթէ զգուշութիւն ըրած ըլլայի ժամանակին՝ թեթեւ պարագայ մը ինձ պիտի յայտնէր ճշգրիտ եղելութիւնը: Մինչդեռ Հրէին հետ կը խօսէի, իւր արկղը բանալէն առաջ, կըլլեց պրանտի մեծ գաւաթ մը, եւ թրջեց իւր ոնգունքը քացախի մէջ թաթթած սպունգով մը. այսպէս ընելուն պատ-

ճառը կ'ըսէր՝ մուշկի հոտէն չախորժելն էր որ ամէն ատեն իրեն ջրային ձկնամիներ կը պատճառէր:

Զգացած սարսափս երբ իմացայ որ ժանտախտն արեւեր էի եւ կարելի է ես ալ վարակեր էի այնու զգացումներս ընկճելով, սաղ քրտինք մը սփռեցաւ բոլոր մարմնոյս վրայ, եւ ինկայ մահաբեր արկղին վրայ նուաղեալ: Կ'ըսեն թէ երկիւղն մարդս ընդունակ կ'ընէ այդ տխուհի տելի դիւրաւ վարակելու. ինչ ալ ըլլայ. հիւանդացայ այն գիշերն եւ անմիջապէս հրատուջոր տէնդով մը բռնուեցայ:

Ինձ համար տաւիլ դժպիտ էր վիճակս՝ երբ ցնորքս դադրելով միտքս կուգային իմ թըշուառ բողբոս պատճառած անթիւ չարիք: Առաջին սթափման միջոցիս, բոլորովն նայեցայ եւ տեսայ որ փոխադրուեր էի խանէն՝ խեղճ հիւղ մը: Պատառ մը, ծխախողը բերանը՝ սենեկին մէկ անկիւնը քաշուած, ինձ իմացուց որ Հէրաթ քաղքէն գիտ դուրս հանած էին Գաւթին հրամանովը, որուն վաճառականք իրենց որոտնջներն ըրած էին: Մահաբեր արկղն սցրած եւ բնական ոտնա հիմնայատակ կործանած էին:

«Եւ եթէ ես չ'ըլլայի՝ չարունակեց պատառը, հաւանօքէն հիմայ մեռած պիտի ըլլայիր: Բայց ուխտ մ'ըրած եմ որ բնաւ չը փախցնեմ առիթ մը բարի գործ մ'ընելու. երբ ամէն մարդ զքեզ միայնակ կը ձգէր, ես քեզ խնամ տարի: Հոս է քսակդ ալ, զոր չ'փոթուցեմ»

միջոցին աղատեցի ամբոխէն եւ մանաւանդ արդարութեան պաշտօնէից ձեռքէն : Քեզ հաշիւ պիտի տամ մէն մի ծախս ըրած բարայիս համար . և ադիկց զատ ըսեմ պիտի քեզ թէ ինչ պատճառաւ այնքան նորանշան ուխտ մ'ըրի :»

Որովհետեւ կը կարծէի թէ այս բարեմիտ կի՛նն մեծ հաճոյք կ'ըզգար խօսելու , գլխովս շարժում մ'ըրի իբր շնորհակալութիւն իւր խոստացած պատմութեան համար , և նա բերանը բացաւ . բայց կը խոստովանիմ որ բոլոր պէտք եղած խնամով ուշ չը դրի իւր անտարակոյս հետաքրքրաշարժ վէպին : Հետաքրքրութիւնն իսկ որ մեր՝ Արեւելեայցս՝ ամենէն բուռն կիրքն է՝ սրախ մէջ մարեր էր :

Չեմ յիշեր ծեր կնոջ պատմութիւնն . իմս իսկ լնիցնելս շատ բան է :

Օգը հրատապ էր , բժիշկք ումանք կը հաւաստէին թէ այս տաքութիւնն մահաբեր պիտի ըլլայ իրենց հիւանդներուն . բայց հակառակ բժիշկներուն գուշակութեան , սրածոթութիւնն դադրեցուց . աղեկցայ , և քաակս աւելի թեթեւցած գտայ հիւանդութեանս պատճառաւ : Ստակիս մնացորդն կիսեցի մարդասէր հիւանդապահիս հետ , և զայն քաղաքը զրկեցի , տեղեկանալու համար թէ ինչպէս կ'երթային գործերն : Ինձ պատասխան բերաւ թէ արտին սաստիկութիւնն շատ նուազեր էր , բայց բազմաթիւ յուզարկաւորութեանց հանգիստներ էր , և լսեր էր քանի մը վաճառականներ որ

կ'անիծէին Տարաբաղդն Մուսայի խենդութիւնն որ՝ ինչպէս կ'ըսէին՝ բերեր էր այս բոլոր աղէտներն Հէրաթի բնակչաց գլուխը : Խենթերն անգամ , կ'ըսեն , փորձառութեամբ կը սովորին : Չմոռցայ այրելու այն անկողինն որոյ վրայ պառկեր էի , և գործածած հագուստներս . ճշմարիտ անունս ծածկեցի , որովհետեւ գիտէի թէ ատելութիւն պիտի պատճառէ , և ընդունուեցայ ուրիշ խեղճ թշուառներու ամբօխի մը հետ , զգուշարանի մը մէջ , ուր ամբողջացուցի քառասունքս , և հանապազօրեայ աղօթք կը մատուցանէի հիւանդաց առողջութեան համար :

Երբ մտածեցի որ այլ ևս անկարելի էր որ հիւանդութիւն պիտեմ , տուն վերադառնալու ճամբայ ելայ : Անհամբեր էի Հէրաթէն հեռանալու ուր գիտէի թէ նզովից առարկայ մ'էի : Զարմանալի ցնորք մը կար որ մտքէս չէր հեռանար : Ինձ կը թուէր թէ բոլոր թշուառութիւններս , Քապուլը ձգելէս ի վեր , ծագէր էին գեղեցիկ Չինի անօթին բժժանքն անդոսնելէս : Երեք անգամ երազեցի , երբ ժանտախտէն աղէկցայ , թէ ոգի մը կ'երեւնար ինձ և կ'ըսէր կշտամբանօք :

«Մուսա , ո՛ր է այն անօթն որ քո խնամոց հաւատացեալ էր :» Այս երազն սաստիկ ներգործեց մտքիս վրայ : Անմիջապէս երբ Քապուլ հասանք , (և այս ուղեւորութեան միջոցին , զարմանօք կը պատմեմ , անյաջող դիպուած մը չը պատահեցաւ) գացի փնտռելու

Սալահետտին եղբայրս, անօթս առնելու համար: Շատ ատեն մնացած չ'էր այն տան մէջ ուր զինք ձգեր էի, և սկսայ կտակածիլ թէ արդեօք մեռեր էր. բայց բռնակիր մը խնայալով հետազոտութիւններս, գոչեց. «Ո՞վ է այն մարդը Քապուլի մէջ որ անգիտանայ Սալահետտին բաղդաւորին բնակարանը. հետս եկուր. և զայն քեզ ցուցընեմ:»

Բնակարանն՝ ուր զիս առաջնորդեց՝ ինձ այնքան հոյակապ երեւցաւ, որ կը վախնայի ներս մտնելու կարծելով թէ բռնակիրը սխալած է: Բայց մինչդեռ կը վարանէի, դուռը բացուեցաւ և լսեցի Սալահետտին եղբորս ձայնը: Զիս տեսաւ մի և նոյն վայրկեանն որ իրեն կը նայէի, և անմիջապէս դէպ ինձ վազեց զիս ողջագործելու:

Միեւնոյն բարի եղբայրն էր առաջուան պէս, և ուրախացայ ի սրտէ իւր յաջողութեանց վրայ: «Սալահետտին եղբայր, ըսի, կընամ արդեօք հիմայ ալ տարակուսիլ թէ կան մարդիկ որ ծնած են բաղդաւոր ըլլալու եւ այլք չարարատտիկ ըլլալու: Որչա՛մ կը վիճէիր հետս այս կէտին վրայ:» — «Զգենք հիմայ մեր վիճը փողոցին մէջ, ըսաւ ժպտելով, եւ եկուր կազդուրուէ. վերջն հանդարտ մոռք խնդրոյն վրայ կը խօսինք.» — «Ո՛չ՝ սիրելի եղբայր, ըսի, յետս նահանջելով, շատ բարի ես, Տարաբաղդն Մուսա մտնելու չէ քո տունդ, գուցէ ագետարեր ըլլայ քեզ եւ քոյրդդ. — միայն եկայ անօթս խնդրելու.» — «Անվրաս է,

պատասխանեց, ներս եկուր եւ զայն կը տեսնես, բայց զայն քեզ պիտի չտամ՝ մինչեւ որ տունս չգաս: Զունիմ ես այդ նախապաշարեալ երկիւղներէն, ներէ ինձ բացատրութիւնս, բայց չունիմ բնաւ այն նախապաշարեալ երկիւղները.» Խօսքին անաւով մտայ իւր տունն եւ զարմացայ մնացի բոլոր տեսածներուս վրայ: Եղբայրս իւր յաջողութեանց վրայ չէր խորխտար՝ այլ ընդ հակառակն կարծես ինձ մոռցնել տալ կը ջանար իմ թշուառութիւններս: Անոնց վէպը լսեց մտադիւր, եւ զիս շնորհապարտ կացոյց իւր դիպաց պատմութեամբ որ՝ կը խոստովանիմ թէ իմինիս պէս նորաքանչ դէպքերով լցուած չէր: Ինձ երեւցաւ, իւր բուն իսկ պատմութենէն՝ թէ հարուստ եղած էր իրաց սովորական ընթացքով, մանաւանդ թէ իւր խոհեմութեամբն: Աչք գոցեցի իւր կանխակալ կարծեաց, եւ չուզելով այլ եւս հակաճառել իրեն հետ, ըսի. «Դու քո կարծեացդ մէջ մնալու ես, եւ ես իմինիս. դու Սալահետտին բաղդաւորն ես, եւ ես Տարաբաղդն Մուսա, եւ այնպէս պիտի մնանք մինչեւ մեր կենաց վերջը:» Դեռ չորս օր չկար որ իւր տուն էի երբ գիպուած մը հանդիպեցաւ, որ ցրցուց թէ որչափ իրաւացի էի: Իշխանին սիրականն, որուն առաջ ծախեր էր իւր Զինի անօթն, թէպէտ հիմայ իւր գեղեցկութիւնը քիչ մը թաւաժեր էր՝ այսու հանդերձ ազդեցութիւն ունէր տակաւին, եւ իւր մեծագործութեան ճաշակը կուտամած չէր: Եղբորս պատուիրեց որ իրեն հա-

մար յանձնարարէ, ի վեհետիկ՝ ամենէն սքանչելի հայլին զոր հնար ըլլայ շինելու : Հայլին շատ յապաղմունքէ և պատրանքէ վերջը, հուսկ ուրեմն հասաւ եղբօրս տունը : Ծրարներէն հանեց զայն, և ևրիկեց տիկնոջ խնաց տալու որ անկնաս էր : Իրիկունը շատ ուշ էր, և հրամայեց որ եղած տեղը մնայ նոյն գիշերը, և պալատը բերուի միւս առաւօտուն : Զայն գըրին տեսակ մը նախասենեկի մէջ որ պառկած սենեակիս կից էր. անոր քով ձգեր էին քանի մը ծրարներ, որոց մէջ կային աշտանակներ եղբօրս դեռ չաւարտած սրահի մը համար : Սալահէտտին հրամայեց իւր բոլոր սպասաւորաց որ հսկեն այն գիշերը, որովհետեւ քովը մեծ գումար մը ստակ ունէր, և յաճախ գողութիւններ լսուած էին դրացեաց տները : Հսելով այս հրամանները, միտքս դրի կազմ և պատրաստ ըլլալու ո՛ր եւ է աղքարարութեան : Դաշոյնս քովի բարձիս վրայ դրի եւ դուռս կեսաբաց ձգեցի, որ խմանամ ամենաչնչին աղմուկն իսկ նախասենեակին մէջ, կամ մեծ սանդղին վրայ :

Դէպի կէս գիշեր յանկարծ արթնցայ աղմուկէ մը որ նախասենեկէն կուգար : Յատկեցի առի դաշոյնս, և մօտենալու վայրկենիս, տեսայ, կանթեղին աղօտ լուսով որ կը վառէր սենեակին մէջ, մարդ մը դիմացս կանգնած սուսերամերկ : Վրան յարձակեցայ հարցնելով թէ ինչ կ'ուզէ, պատասխան չառնելով, ու տեսնելով զայն դաշոյնովը վրաս քալել՝ իրեն

մահաբեր հարուած մը կարծեցի տալ : Նոյն վայրկենին սոսկալի շառաչիւն մը փրթաւ, և հայեւոյն կոտորուանքներն, զոր ջախջախեր էի, ինկան ոտքիս առջեւ : Անմիջապէս սեւ բան մը ուսէս վեր ցատկեց, անոր ետեւէն վազեցի՝ հակերուն վրայ կոխկռտելով զանոնք և գլորելով սանդուղներէն վար : Եղբայրս դուրս ելաւ սենեակէն հասկնալու այս բոլոր խռովութեան պատճառը, և երբ տեսաւ որ չնաշխարհիկ հայելին կոտորած է և ես աշտանակներուն բեկորներուն վրայ սանդղաց տակն ինկած եմ, չկրցաւ ինքզինքն արգիլել աղաղակել «Յիրաւի եղբայր Տարաբաղը Մուսան ես :» Երբ առաջին յուզումն անցաւ, չկրցաւ խնդալը բռնել դիրքիս վրայ : Այնպիսի բարութեամբ մը, որ հազարապատիկ աւելի տրտմեցուց զիս եղածին վրայ, ինձ օգնելու եկաւ որ վեր ելլեմ, տուաւ ինձ իւր ձեռքն եւ ըսաւ : «Ներէ ինձ, եթէ բարկացայ քեզի դէմ առջի բերան : Ապահով եմ որ ինձ փնաս ընելու մտօք չըրիր, բայց պատմէ եղածը :»

Մինչդեռ Սալահէտտին կը խօսէր, իմացայ միեւնոյն աղմուկն որ զիս յուզած էր նախասենեակին մէջ, բայց ետիս նայելով տեսայ սեւ տատրակ մը միայն, որ կը թուէր արագութեամբ իմ քովէս՝ անգէտ իւր գործած փնսսին : Այս տատրակը տարաբաղքաբար բերեր էի տունն նախընթաց օրը եւ սնուցեր էի՝ ջանալով զայն ընտելացնելու պղտի եղբօրորդեացս համար : Մտքէս անցած չէր որ պատճառ պի-

տի ըլլայ այսպիսի դիպուածի մը : Եղբայրս թէպէտ ջանաց ծածկել իւր տագնապն ինձմէ , շատ կը խիթար սիրական բառերնս սրտմտութենէն իւր սքանչելի հայեւոյն կորուստին վրայ : Տեսայ որ անտարակոյս պատճառ պիտի ըլլամ իւր կործանման , եթէ շարունակեմ իւր տունը մնալ , ուստի եւ ոչ մէկ կերպով կրցաւ համոզել զիս կենալու : Վեհանձն եղբայրս տեսնելով որ միտքս դրած եմ երթալ , ինձ բռն : «Գործակալ մը զոր փաճառքներս ծախելու համար քովս ունէի՝ մեռաւ քանի մ'օր առաջ , կ'ուզե՞ս իւր տեղն անցնիլ : Բաւական հարուստ եմ գիտնալու համար այն պզտի սխալմանց որոց մէջ կրնաս իյնալ , գործին ազխաութեամբ , եւ պիտի ունենաս ընկեր մը որ կարող եւ փափաքող է քեզ օգնելու : » Միբայս զորոված էր այսչափ բարութենէն , մասնաւորապէս այսպիսի ատեն մը : Հետո յղեց իւր գերիններէն մին այն խանութն ուր գիւս այժմ՝ կը տեսնէք՝ տեսրք : Գերին եղբորս հրամանաբերաւ Ձինի անօթս եւ ինձ զայն յանձնեց անփնաս այս խօսքով : «Այդ հրաշքի բոտորագոյնն որ գտնուեցաւ այս անօթին եւ անոր զուգակցին մէջ , առաջին պատճառն եղաւ Սալաւահէտտինին հիմայ վայելած հարստութեան , ուստի արդարութիւն միայն ըրած կ'ըլլայ այդ հարստութիւնն կիսելով իւր Մուսա եղբոր հետ : »

Հիմայ կարելի եղածին չափ շահաւոր դրից մէջ զետեղուած էի , բայց միտքս անհանգիստ էր , երբ կը մտածէի որ կտարած հայլին գուցէ

եղբորս կործանման պատճառ ըլլայ : Լաւ գիտէի թէ զայն յանձնարարող տիկինն ցասկոտ էր բնաւորութեամբ եւ այս պատրանքն բաւական էր՝ անոր վրէժխնդիր օգին արծարծելու : Եղբայրս իմաց զրկեց ինձ այս առաւօտ որ տիկնոջ զայրոյթը սաստիկ էր , բայց իմ ձեռքս էր աւելն ձախող հետեւանաց առաջքն առնուլ : «Իմ ձեռքս , գոչեցի , ուրեմն յիրաւի երջանիկ եմ : Ըսէ եղբորս թէ բան չըկայ որ չընեմ իմ երախտագիտութիւնս անոր յայտնելու , եւ զայն ազատելու համար յիմարութեանս հետեւանքներէն : Եղբորս զրկած գերին յայտնել չէր ուզեր թէ ի՞նչ էր ինձմէ խնդրուածն , ըսելով թէ իւր տէրը կը վախնար որ գուցէ զլանամ իւր խնդիրը : Ստիպեցի զինք խօսելու ազատորէն , եւ այն ատեն ինձ բռնա թէ բան մը չի պիտի կարենայ փոխարինել հայեւոյն կորուստը՝ բայց եթէ միւս Ձինի անօթն զոր Սալահէտտիննի քով տեսեր էր :

Անկարելի էր ինձ վարանիլ . եղբորս վեհանձն բարութեան համար զգացած երախտագիտութիւնս յաղթեց իմ նախապաշարեալ յամուրթեանս : Եւ իրեն պատասխան զրկեցի թէ ես անձամբ անօթն իրեն պիտի տանիմ : Այս երեկոյ զայն վար առի գարակէն ուր կը կենար . փաշելից էր , եւ զայն լուացի , բայց տարաբարզարար մաքրելու ջանալով մէջի բոտորագոյնին մնացորդներէն , տաք ջուր թափեցի , եւ անմիջապէս իմացայ պղպալու ձոխք մը , եւ անօթս , քանի մը վայրկենէն ձայթե-

ցաւ բարձրաձայն սլայթմամբ : Այս կտորուանքներն են աւաղ անոր բոլոր մնացորդներն : Տարարադուլութեանցս չափն հիմա լրացաւ : Կըրնա՞ք ուրեմն զարմանալ, տեսարք, եթէ կ'ողբամ իմ թշուառութեանս վրայ : Այլ եւս կ'աւարտին բոլոր յոյսերս այս աշխարհի վրայ : Լաւագոյն կ'ըլլար եթէ շատ առաջ մեռած ըլլայի, եւ երանի թէ բնաւ ծնած իսկ չըլլայի : Ինչ որ ըրի, ինչ որ փորձեցի չյաջողեցաւ : Տարարադուլ Մուսա է անունս եւ չարարադուլութիւնն իր գրօշմը կնքեց ճակտիս վրայ :

Գ.

Տարարադուն Մուսայի ողբերն ընդմիջուեցան Սալահէտտինին ներս մտնելովը : Պարապ տեղ սպասէլէն վերջը քանի մը ժամ, կուգար տեսնելու թէ արդեօք աղէտք մը հանդիպեր էր իւր Մուսա եղբօր : Զարմացաւ մնաց երկու կեղծ վաճառականները տեսնելով, եւ յուզումը չը կրցաւ զսպել երբ տեսաւ կոտորած անօթն : Այսու հանդերձ իւր սովորական վեհանձնութեամբն սկսաւ Մուսան մխիթարելու, եւ կըտորուանքներն առնելով, խնամով զանոնք զըննեց, մէկիկ մէկիկ փակցուց նորէն, գտաւ որ ամենեւին եզրերը փլատուած չէին, եւ յայտնեց որ զանոնք կրնար այնպէս մը յերկուրեւ որ

բնաւ առաջուրնէ տարբերութիւն մը չ'ունենան : Մուսայի խելքը գլուխն եկաւ ասոր վրայ : «Եղբայր, ըսաւ, կ'սփոփիմ Տարարադուն Մուսա ըլլալուս, երբ կը մտածեմ որ դու Սալահէտտին Բաղդաւորն ես : Տեսէք, տեսարք, շարունակեց, դառնալով դէպ ի կեղծ վաճառականներն, հազիւ թէ այս ամենաբաղդաւոր մարդը հինգ վայրկեան մեր ընկերութեան մէջ գտնուեցաւ, եւ ահա գործոց կերպարանքը բաբոխեցաւ :

Իւր ներկայութիւնը բերկրութիւն կ'ազդէ. կը դիտեմ որ ձեր երեսն, որ իմ չարագոյժ պատմութենէս տխրած էր, լուսաւորուեցաւ հազիւ թէ զինք տեսաք : Եղբայր՝ կը փափաքիմ որ այս տեսարց տրիտուր մը տաս այն ժամանակի կործանեան համար զոր ըրին մոխիկ ընելով տարարադութեանցս երկար ցուցակն, եւ քու կենսագրութիւնդ ընես, զոր ապահով եմ աւելի զօսուցիչ պիտի գտնեն» Սալահէտտին հաւանեցաւ այն սլայմանաւ որ օտարականք պիտի մինչեւ իւր տունն ընկերակցին իրեն եւ մասնակցին ընկերաբար խնջոյքի մը : Առաջ կրկնեցին նոյն ներդուլութեան ձեւն իբր թէ պարտաւորեալ էին վերադառնալու իրենց պանդոկն : Բայց վերջապէս թագաւորին հետաքրքրութիւնը յաղթեց, եւ ինքն եւ իւր փոխարքայն Սալահէտտին Բաղդաւորին տունը գացին, որ սեղանէն վերջը, պատմեց իւր պատմութիւնը հետեւեալ ձեւով :

«Իմ Սալահէտտին Բաղդաւոր կոչուիլս ազ-

դեպ ինձ նաև վտանգութիւն մը իմ անձիս վերայ, թէպէտ չեմ կրնար միտքս բերել զարմանալի օրինակ մը բարի բաղդի մանկութեանս միջոցին։ Մօրս պառաւ դայեակ մը, յերաւի, կը կրկնէր քսան անգամ օրը թէ ինչ բանի որ ձեռնարկեմ պիտի յաջողի, որովհետեւ Սալահէտօլին Բաղդաւորն էի։ Անով յանձնապատան եւ պէգ եղայ, եւ դայեկիս գուշակութիւններն յերաւի կրնային արգիլել անոնց լըրացումն, եթէ՝ երբ հնգեառասնամեայ էի՝ ուշաբերելու ստիպած չ'ըլլար զիս դէպք մը որ բռնադատեց զիս փակուած միալու շատ ատեն սենեկիս մէջ, իմ մանկական քմահաճութեանս եւ անխոհմութեանս պատճառաւ։

Այն ժամանակները Գաղղիացի մը կադ արքունեաց մէջ. հանձարեղ մեքենագործ մ'էր, որ պաշտօն ունէր տէրութեան մէջ եւ իշխանին ալ աչքը մտած էր, ի մեծ դայթակցութիւն իմ նախապաշարեալ հայրենակցացոյ։ Թագաւորին տօնախմբութեան օրն, քանի մը գեղեցիկ հրախաղութիւններ ցցուց, եւ ես Բապուլի շատ մը բնակչաց պէս դացի տեսնելու։ Այնպէս հանդիպեցաւ որ կենամ Գաղղիացոյն կեցած տեղւոյն մօտ։ Ամբողջ խոնքեցաւ իւր բուրբախքն, եւ ես միւսներուն պէս։ Գաղղիացին խնդրեց որ՝ մեր օգափն համար՝ քիչ մը բացը կենանք, եւ ըսաւ մեզ թէ շատ կրնայինք վընասուիլ իւր գործածած հրանիւթներէն։ Վընատահեցայ բարի բաղդիս, անարգելով ամէն ըզգուշութիւն, եւ հետեւանքն եղաւ որ երբ

կը դպչէի հրախաղութեանց համար սլաւոստուած քանի մը կիզանուա նիւթոց, բռնկեցան, նետեցին զիս հողին վրայ մեծ սաստկութեամբ, եւ զիս չարաչար այրեցին։

Այս դիպուածս, տեսաք, իբր ամենաբաղդաւոր պարագայ մը կը նկատեմ կեանքիս մէջ որովհետեւ ընկճեց եւ ուղղեց բնաւորութեանս խրոխտութիւնը։ Պատկած մնացած ատենս անկողնիս մէջ, Գաղղիացի պարոնը ստէպ զիս տեսնելու կուգար։ Շատ զգայուն մարդ մ'էր, եւ հետս ունեցած խօսակցութիւնքն զարգացուցին միտքս, եւ շատ մը նախապաշարեալ խենդութիւնէն զիս տալքինեցին, մանաւանդ անկէ որ արմատացեր էր սրտիս մէջ, այսինքն մարդկային գործոց մէջ բաղդ կամ ճակատագիր կոչուած բանին գերիշխանութիւնն։

«Թէ եւ Սալահէտօլին Բաղդաւորն կոչուիս, կ'ըսէր, սակայն կը տեսնես որ խոհմութեան սրկասութիւնն ուր տարաւ զքեզ՝ ծաղիկ հասակիդ մէջ գերեզմանին դուռը։ Խորհուրդս մտիկ ըրէ, եւ այսուհետեւ աւելի խոհմութեան հաւատացիր քան բաղդի։ Թող բաղմութիւնն, եթէ կ'ուզէ, զքեզ Սալահէտօլին Բաղդաւորն անուանէ, բայց դու ինքդինքդ կոչէ եւ ըրէ Սալահէտօլին խոհեմն։»

Այս խօսքերն մտքիս վրայ անջինջ տարաւորութիւն մը գործեցին, եւ տունն ուրիշ ձեւ մը կարծեացաւ եւ բնաւորութեանս։ Մուսա եղբայրս, անպատճառ ձեզ ըսած է թէ մեր կարծեաց տարբերութիւնն, նախասահմանութեան

խնդրոյն վրայով յաճախ վէճի տեղի տուած է մեր մէջ, բայց մէկզմէկ չը կրցանք համոզել եւ երկուքնիս գործած ենք մեր կենաց մէջ մեր տարբեր կարծեաց համեմատ : Ասոր կը վերադրեմ իմ յաջողութիւններս եւ իւր տարաբաղդութիւններն : Առաջին հարստութեանս փայլըն, ինչպէս իմացած էք Մուսայէն, հետեւանքն էր բոսորաներկին, զոր կատարեալագործեցի անհուն դժուարութեամբ : Փոշին յիրաւի ես գըտած էի Ձինի ամաններուն մէջ . բայց հոն մընացած կ'ըլլար մինչեւ ցարդ, եթէ զայն օգտակար ընելու աշխատած չ'ըլլայի :

Կը շնորհեմ որ մասամբ միայն կրնանք հըրամայել պատահարաց եւ զանոնք կանխատեսել, այլ ինձ կը թուի թէ մեր կարողութեանց գործածութենէն կը կախուի մեր ճակատագիրն : Բայց տեարք, թերեւս աւելի կը բազմաք իմանալ արկածներս քան խորհրդածութիւններս, եւ յիրաւի ամօթով եմ որ զձեզ զրօսեցնելու համար չ'ունիմ տարօրինակ պատահարներ պատմելու : Կը ցաւիմ որ ձեզ չեմ կրնար ըսել թէ կորսուած եմ աւազուտ անապատի մը մէջ : Բնաւ ժանտախտէ բռնուած չեմ, ամենեւին նաւարեկած եմ, բոլոր կեանքս մնացեր եմ Քապուլի բնակիչ մը, եւ ատենս անցուցած եմ շատ հանգիստ եւ միօրինակ եղանակաւ : Թագաւորին սիրականէն ընդունած ստակս Ձինի անօթիս համար, ինչպէս որ եղբայրս ձեզ պատմեց, զիս կարող ըրաւ վաճառականութեանս աւելի զարգացում տալու :

Յառաջ գացի գործովս, եւ ամբողջ ճիշդ թափեցի գործաւորներս գոհացնելու ամէն ազնիւ եւ պատուաւոր կերպերով :

Այս ճարտարութիւնն եւ քաղաքավարութիւնն ակնկալութենէս շատ աւելի յաջողեցան : Քանի մը տարի վերջը հարուստ էի իմ գործս ունեցող մարդու մը համար : Չը պիտի սկսիմ զձեզ նեղացնել փոքրիկ վաճառականի մը կենաց օրավէպով . կ'անցնիմ այն ամէն պարագագայից վրայէն որ էական փոփոխութիւն մը չը բերին գործոցս մէջ : Բայց ներեցէք ինձ յիշել գլխաւոր դէպք մը, սոսկալի հրդեհ մը պատահեցաւ իշխանին պալատին որմոց քով . օտարական ըլլալնուդ, տեարք, թերեւս իմացած չ'ըլլաք այս պատահար, որ այնքան մեծ յուզում պատճառեց ի Քապուլ : Փոխարքային սքանչելի պալատն ամբողջովին հրկիզեցաւ, եւ հալած կապարն վար հոսեցաւ տանիքէն :

Ձանազան կարծիքներ ունէին դրացիներս հրդեհին սկզբնապատճառին վրայով :

Ոմանք կը կարծէին թէ պատիժ մ'էր իշխանին կրօնական զգացմանց մէջ անհոգ ըլլալուն, այլք կը նկատէին թէ երկնառաք ազդարարութիւն մ'էր դադրեցնելու համար մեր նոր ձեռնարկած պատերազմը Հնդկաց դէմ : Սակայն սրճատան քաղաքագիտաց մեծամասնութեան կարծիքն էր թէ ճակատագրին հրամանն էր որ այդ պալատն այրի : Գոհանալով այս ենթադրութեամբ, զգուշութիւն չ'ըրին

արդիւեւում նոյնօրինակ դիպումներ իրենց տուններուն մէջ ալ : Ոչ երբէք հրկիզութիւնք այնքան յաճախ էին քաղքին մէջ որքան այդ ժամանակ : Հազիւ թէ գիշեր մը կ'անցնէր որ ամէն մարդ քունէն չ'արթննար « Հրդեհ՛, հրդեհ՛ » աղաղակող գիշերապահին ձայնէն :

Այս ստէպ հրդեհներն աւելի ահարկութիւն չ'ըլլային սպիրատ մարդկանց բաղնութենէն . որ ամէն ատեն աչքերնին բացած էին աւելցընելու համար շիթութիւնն յորմէ օգուտ կը քաղէին կողպտելու հրկիզելոց տուններն : Իմացուեցաւ որ այդ հրձիգները շատ անգամ կը պահուրտին, իրիկուան դէմ՝ չուկային քովերն, ուր ամենահարուստ վաճառականք իրենց սպրանքը կը պահեն :

Այս անպատեհ ոմանք ձեռքակալուած էին քունտակ կամ լուցիկ նետելու ատենին, պատահաններէն ներս, եւ եթէ այդ այրելիքները մնային բաւական ատեն, անվրէպ հրդեհէին պիտի տունը :

Այսու հանդերձ մարդիկ՝ նոյն խել անոնք որ կալուածատէր էին՝ փոխանակ զգուշութիւնն աւելցնելու՝ միակերպ կը կրկնէին . « Տիրոջը կամքն է » . եւ հետեւաբար անհոգ կը մնային ամէն զգուշութեանց : Եւ ընդհակառակն, յիշելով զգօն մեքենադարձէն ստրկած դատ, ամենեւին չէի վճատեր չար բաղդի երկիւղէն, եւ ոչ կը հաւատայի յանձնադատտնութեամբ բարի բաղդիս : Բոլոր կարելի եղած զգուշութիւններն ըրի ապահովելու համար

ինքզինքս : Ամենեւին անկողին չէի մտներ, առանց նայելու թէ արդեօք բոլոր լոյսերն եւ կրակները մարած էին տան մէջ : Նմանապէս սովորած էի Գաղղիայիէս որ թաց շաղախն ամենազու էր կրակը խափանելու համար : Չափ մը շաղախ ունէի դրուած սայլատուներուս մէջ, զոր կրնայի գործածել պէտք եղած ատենըն : Այս ամէն զգուշութիւններն ինձ օգտակար էին, եւ տունս յիրաւի ամենեւին չը բռնկեցաւ, բայց դրացեացս տունները հինգ անգամէն աւելի հրդեհի պատահեցան ձմրուան մը միջոցին մէջ : Ձանքերովս, կամ մանաւանդ թէ զգուշութեամբս, քիչ վնասուեցան, եւ բոլոր դրացիներս զիս իրենց ազատարար եւ բարեկամ կը նկատէին, առատ պարգեւօք զիս լիացուցին, եւ ինձ ընծայեցին բաղձացածէս աւելի պարգեւներ : Բոլորն ալ կը կրկնէին թէ Սալահէտին Բաղդաւորն եմ . այդ գովեստը մերժեցի, աւելի փառք զգալով խոհեմ Սալահէտին կոչուելու : Այսպէս յաճախ մեր համեստութիւն կոչածն, աւելի նուրբ եւ քօղածածուկ հպարտութիւն մ'է : Բայց պատմութիւնս շարունակեմ : Գիշեր մը սովորականէն աւելի ուշ սեղանի կեցած էի, բարեկամի մը տուն . միայն պահապանք փողոցներն էին, անոնք ալ կարծեմ քունի մէջ էին : Երբ կ'անցնէի փողակներէն միոյն քովէն, որ ջուրը կը բաշխէին քաղքին մէջ, կայլակելու ձայն մ'իմացայ, եւ ուշիւ նայելով, գտայ որ ջրոյ փող-

բակին ծորակը կիսաբաց էր, այնպես որ ջուրը դուրս կը վազէր։ Չայն դարձուցի իւր ձիւդ տեղն, խորհելով որ դիպուածով դարձուեր էր, և վրան կոխեցի։ Բայց հազիւ թէ քիչ մը կը յառաջանայի պատահեցայ ուրիշ փողրակի մը երկրորդ և երրորդի մը որ նոյնպէս կիսաբաց էին։ Ապահով էի որ այս չէր կրնար պարզ դիպուած մը ըլլալ և կասկածեցայ որ չարամիտ մարդիկներ այնպէս ըրած էին դիտաւորութեամբ դուրս հոսեցնելու եւ սպառելու համար ջուրն, որ կրակը մարելու չը մնայ եթէ պատահէր գիշերուան մէջ։

Հանդարտ կեցայ քանի մը վայրկեան, մըտածելով թէ խոհեմութիւնն ինչ կը պահանջէ որ ընեմ։ Անկարելի պիտի ըլլար ինձ համար վազել քաղքին ամէն կողմն, եւ դադրեցնել խողովակներն որ պարապ տեղ չը վազեն։ Ամենէն առաջ մտածեցի որ պահապաններն արթնցնեմ, որոնց շատը կը քնանային իրենց կաշարաններուն մէջ։ Բայց խորհեցայ որ կարելի է իրենց ալ վստահելու չէ, եւ թերեւս ապիրատից հետ խօսք մէկ ըրած էին։ Եթէ այնպէս չ'ըլլար մինչեւ այս ատեն դիտած ըլլալու եւ կասեցուցած ըլլալու էին իրենց մերձաւոր ծորակներուն վազելը։ Միտքս դրի արթնցնել հարուստ վաճառական մը, Տամաթ զատէ կոչուած որ կը բնակէր իմ քովս, և որ շատ մը գերիներ ուներ զոր կրնար զրկել քաղքին զանազան կողմերը, չարագործութիւնը խափանելու եւ վերահաս փոսնդը գեկուցա-

նելու համար բնակչաց։ Շատ զգայուն և գործօն մարդ մ'էր, և շուտ մը գործի կ'սկսէր, չէր նմաներ ուրիշ արեւելեաց որոց արթննալէն ժամ մը ետքը դեռ թմրութիւնը վրայէն չ'անցնիր։ Որոշումը շուտ կ'առնէր եւ խօսքն կը ձեռնարկէր գործի։ Եւ իւր գերիներն իրենց տիրոջ կը նմանէին։ Անովջապէս պատգամաւոր մը փութացուց վէզիրին որպէս զի Իշխանին փնաս մը չը համի, եւ ուրիշները զրկեց արեւակալներուն Քապուլի իւրաքանչիւր թաղերուն մէջ։ Մեծ ազդարար թմբուկն զարնուեցաւ արթնցնելու համար բնակիչներն, եւ հազիւ թէ այս Լսելի կ'ըլլար, կէս ժամ չ'անցած հրդեհը ձարակեցաւ Տամաթ զատէի տունն իսկ գունտակի մը պատճառաւ, զոր ձգեր էին իւր տան դրանց միոյն ետին։ Այս ոճիրը գործող եղեռնագործք վազեցին եկան կողոպտելու համար, բայց սալչած մնացին երբ ինքզինքնին պահապանութեան տակ տեսնելով չը կրցան հասկընալ թէ ինչպէս իրենց դիտաւորութիւնը վերիպուեր էին։ Ժամանակին հասած օգնութեանց չնորհիւ, բարեկամիս տան մէջ հրդեհը մարեցաւ։ Թէպէտ նոյն գիշերուան ուրիշ տեղ ալ կրակներ պատահեցան, բայց քիչ փնաս եղաւ որովհետեւ զգուշութիւն բանեցնելու ատեն կար, խողովակները գոցուելով բաւական ջուր մնացած էր։ Ժողովուրդն արթնցաւ եւ փոսնդն իմացաւ, ասով անփնաս աղատեցան։ Միւս օրն հազիւ թէ չուկան երեւցայ, վաճառականները բոլորովն ժողովուեցան, զիս ի-

րենց ազատարար կոչելով և իրենց ընչից պահպանող :

Տամաթ զատէ վաճառականը զոր արթընցուցեր էի նախընթաց գիշեր, ինձ ոսկւոյ մեծ քսակ մը տուաւ, եւ դրաւ մատիս վրայ մեծադին աղամանդ մը. ամէն վաճառականներն իրեն օրինակին հետեւեցան, եւ հարուստ ընծայներ ամէն կողմէ կը տեղւային : Ատենակալք ալ զրկեցին ինձ իրենց հաճութեան նշաններն, եւ փոխարքայն շատ գեղեցիկ աղամանդ մ'ընծայեց, այսպէս գրուած տողով մը. « Քապուլը փրկողին : » Ներեցէք ինձ, Տեարք, եթէ ու նայնամտութիւն կ'երեւի յիշելս այս պարագայներն : Կը փափաքիք իմանալ պատմութիւնըս, ուստի չեմ կրնար կենացս նշանաւոր մէկ պարագայն լռութեամբ անցնիլ : Քսան և չորս ժամու մէջ ինքզինքս հարստացած գտայ քաղքին բնակչաց երախտագիտութեան առատ պարգեւօք եւ իմ երազած վիճակէս շատ բարձր գտայ ինքզինքս : Տուն մը գնեցի որ արդի վիճակիս համեմատ ըլլայ եւ քանի մը գերիներ. երբ գերիներս տուն կը տանէի, հրէի մը հանգիպեցայ որ զիս կայնեցուց ըսելով իւր լեզուով. « Կը տեսնեմ թէ տէրս գերիներ գըներ է. զանոնք կրնամ զգեստաւորել աժան գնով : » Խորհրդաւոր բան մը կար այս հրէին ձեւերուն մէջ, եւ չը սիրեցի իւր կեցուածքըն. բայց խորհեցայ որ քանհաճութեամբ վարուելու չեմ, տուրեւաւիս մէջ՝ եւ եթէ այդ մարդն կրնար յիրաւի գերիներս ուրիշ

մ'աւելի աժան կրնար հագուեցնել, անհոգ ըլլալու չեմ՝ պարզապէս իւր մօրուաց կտրուածքըն, իւր աչերուն նայուածքն, կամ իւր ձայնին հնչումը չը սիրելուս համար : Հրէին հրամայեցի որ մինչեւ տունս ինձ ուղեկցի, ըսելով որ առաջարկութիւնը վրայ պիտի խորհիմ :

Երբոր սակարկութեան սկսանք, զարմացայ զայն այնչափ բանաւոր գտնելով իւր պահանջմանց մէջ : Կէտի մը վրայ միայն երեւցաւ թէ չէր ուզէր բնաւ զիջանել : Խնդրեցի ոչ միայն տեսնել հագուստներն, այլ եւ գիտնալ ալ թէ ինչպէս զանոնք ձեռք բերեր էր :

Այս մասին վրայ երկդիմի խօսեցաւ. մըտածեցի որ ասոր մէջ բան մը կայ : Խորհեցայ ինչ կրնար ըլլալ և գատեցի որ աղոնք գողտնի ապրանք էին, կամ տարափոխիկ ախտէ մեռած մարդու մը հանդերձներ : Հրեայն ցըցուց ինձ արկղ մը որուն մէջ, կ'ըսէր, ինչ որ հանէի կրնայի ընտրել : Դիտեցի որ երբ արկղը պիտի բանար իւր քթին խնկաւէտ հոտեր տարաւ. ինձ ըսաւ թէ այնպէս կ'ընէր զգուշանալու համար մուշկին հոտէն որով խնկուած էր : Մուշկն, ըսաւ, զարմանալի արդիւնք մ'ունէր իւր ջիղերուն վրայ. իւր գործածած հոտերէն ես ալ խնդրեցի ըսելով թէ մուշկն ինձ ալ անախորժ էր : Հրեայն, խայթուած իւր խիղճէն, կամ թերեւս գիտելով կասկածներս, մեռելատիպ դալկացաւ :

Պնդեց թէ ձեմարիտ բանալին քովը չ'ըլլալուն չը կրնար բանալ արկղն. ըսաւ թէ զայն

փնտաւելու պիտի երթայ, եւ նորէն պիտի կանչէ զիս :

Զիս ձգելէն վերջն, ուշի ուշով գննեցի արկղին կախարչին վրայ քանի մը գրեր որ բուրորովն եղծուած չէին : Կարդացի Զմիւռնիա բառը, եւ այս բաւական եղաւ զիս հաստատելու կասկածներուս մէջ : Հրեայն ալ չը վերադարձաւ եւ քանի մը բեռնակիր զրկեց արկղն առնելու :

Իրեն վրայով բան մը չ'իմացայ ժամանակ մը, մինչեւ որ օր մը՝ երբ Տամաթ զատէի տունըն էի, տեսայ հրեայն ուրուաւորապէս անապատնօք անցնիլ սրահներէն միոյն մէջէն, իրբեւ թէ ուղիւ ինձմէ փախչալի : « Բարեկամս, ըսի Տամաթ զատէի, մի վերադրեր հարցումս անփայել հետաքրքրութեան, կամ քո գործերուդ մէջ խառնուելու փափաքի մը, եթէ կը համարձակիմ հարցնել թէ այդ հիմայ անցնող Հրէին հետ ի՞նչ տեսակ գործ ունիս :

« Ինձ խոստացաւ նախնայիս համար հազուադէպ լինել, պատասխանեց բարեկամս, ուրիշ տեղէն աժան գնով : Միտք մ'ունիմ, Ծաթմա աղջկանս անակնկալ հաճոյք մը պատճառել իւր ծննդեան տարեդարձին, զրօսանք մ'ընելով մեր պարտէզը, դրեկին մէջ : Իւր բոլոր աղախնայք պիտ'երեւան նոր զգեստիւ : » Այս առթիւ ընդմիջեցի բարեկամս, եւ ըսի թէ ինչ կասկած ունէի այս հրէին եւ իւր լաթերուս վրայ : Աս յայտնի է որ ախոր կրնայ հաղորդուիլ զգեստներով, ոչ միայն ամիսներ այլ

նաեւ տարիներ անցնելէն վերջը : Վաճառականն որոշեց այս ապիրատին հետ առնէ յարարերութիւն դադրեցնել որ հաղարաւոր մարդու մահուան պատճառ ըլլալ կը յանդիմանէր քանի մը ոսկի շահելու համար : Այս գէպին վրայ տեղեկութիւն զրկեցինք դատաւորին, բայց դատաւորն յամրաշարժ էր : Եւ հրեայն ձերբակալելէն առաջ, անպիտանը փախեր էր : Երբ իւր տունը բնտնեցին, ինքն եւ իւր արկղն աներեւոյթ եղեր էին : Ընեցինք որ Հերաթ գացեր էր, եւ ուրախացանք որ գտնէ Բապուլ իրմէ աղատուներ է :

Բարեկամս, Տամաթ զատէ, ինձ ցըցուց ջերմագին երախտագիտութիւն մը : « Յառաջ հարգաւորութիւնս աղատեցիր, հիմայ ալ կեանքս, եւ կեանք մ'որ աւելի սիրելի է ինձ համար քան իմ կեանքս, Ծաթմա աղջկանս կեանքն : »

Այդ անունը լսելուս, չը կրցայ, կարծեմ ծածկել այլայլութիւն : Տեսած էի բամբիշն եւ յափշտակուելի էի իւր գեղեցկութեամբ, եւ իւր ձեւոց անուշութենէն : Բայց որովհետեւ գիտէի թէ ուրիշի մը կին պիտի ըլլայ, զսպեցի զգացումս, եւ որոշեցի տարադրել մտքէս գեղեցիկ Ծաթմային պատկերն : Իւր հայրն, այդ վայրկենին փորձութիւն նետեց ճամբուս մէջ, որուն դիմադրելու համար պէտք եղաւ ինձ բոլոր ոյժս : « Սալահէտովն, շարունակեց, իրաւունք է որ դու՝ որ մեր կեանքն աղատեցիր՝ մեր խնջոյքն մասնակցիս : Հոս եկուր Ծաթմայիս ծնած օրը : Դեղ պիտի պատաշտամքն վրայ դնեմ որ

պարտիզին վրայ կը նայի, եւ պիտի տեսնես ամբողջ տեսարանն : Պիտի ունենանք կակաջներու տօն մը, նման անոր որ՝ ինչպէս գիտես՝ մեր Իշխանին պարտէզներուն մէջ տեղի կ'ունենայ : Ապահով եղիր, տեսարանն արժանի է ներկայ գտնուելուդ եւ բազդ պիտի ունենաս տեսնելու Ֆաթմաս, վայրկեան մը իւր քօղը չը դրած :

«Այդ բանէն է՝ ընդմիջեցի, որ ամենէն աւելի կը փափաքիմ խորշիլ : Ինձ չը պիտի ներեմ հաճոյք մ'որ բոլոր կեանքիս երջանկութիւնն կրնայ աղարտել : Բան մը չը պիտի ծածկեմ քեզմէ որ ինձ հետ այնչափ վատահոլութեամբ կը վարուիս : Տեսած եմ քո Ֆաթմայիդ նազելի կերպերն, բայց գիտեմ որ աւելի երջանիկ մարդու մ'է նա :»

Տամատ զատէ շատ գոհ երեւցաւ այն անկեղծութենէն որով միտքս բացատրեցի, բայց կը պնդէր որ իրեն հետ նստիմ պատշգամին վրայ, կակաջից հանդիսին օրը . եւ ես իմ մասին՝ չէի կրնար հաւանիլ ինքզինքս սիրասուն Ֆաթմային կրկին մէկ տեսութեանն ենթարկելու :

Բարեկամս գործածեց ամէն փաստ միտքս փոխել տալու համար, ջանաց որոշումս ծաղրելի երեւցնել, եւ երբ ամէն բան վրիպեցաւ, բառ ցատկոտ ձայնով մը : «Գնա՛ ուրեմն՝ Սալահէտտին, ապահով եմ որ զիս կը խարես, ուրիշ կնոջ մը համար յօժարութիւն կըզգաս և ինձմէն կ'ուզես զայն ծածկել, եւ ապահով եմ

թէ կը մերժես հրաւերս ոչ թէ ինչպէս կ'ըսես, խոհեմութեան համար, այլ իրօք անտարբերութեան եւ արհամարհանաց համար : Ինչո՞ւ չես յայտնէր ինձ քու սրտիդ ձգնարտութիւնն այն անկեղծութեամբ որով բարեկամ մը իւր բարեկամին հետ կը վարուի :»

Զարմացած մնացի այս անակնկալ յարձակմանէն եւ այն բարկութենէն որ Տամաթ Չատէի աչքերէն կը ցոլանար, մանաւանդ որ մինչեւ այդ ատեն երեւցած էր ինձի միշտ հեզահամբոյր եւ լուրջ բնավորութեան տէր մարդ մը : Քիչ մնաց որ իմ ալ զայրոյթս պիտի բորբոքէր, զինքը պիտի ձգէի փախչի : Բայց բարեկամը անգամ մ'որ կորսուին դիւրաւ չեն վերըստացուիր : Այդ նկատողութիւնն կարող եղաւ ցատումս զսպելու : «Բարեկամս, պատասխանեցի՝ այդ խնդրոյն վրայ վազն կը խօսինք, հիմայ բարկացած ես, հետեւաբար արդարութեամբ չեմ կրնար վարուիլ . բայց վազն հանդարտ կ'ըլլաս, այն ատեն կը համազուիս որ զքեզ չը խաբեցի, եւ թէ ուրիշ դիտաւորութիւն չ'ունիմ, բայց եթէ պահպանել իմ երջանկութիւնս, ամենէն խոհեմ դատած միջոցներովս՝ որոց հօրադոյնն է վտանգաւոր Ֆաթմային տեսքէն խորշիլ : Ուրիշ կնոջ աչք չունիմ :»

«Ուրեմն, ըսաւ բարեկամս զիս գրկելով եւ ձգելով բարկութեան ձայնն զոր միայն առերէր իմ որոշումս լիուրի կերպով փորձելու համար, ուրեմն, Սալահէտտին՝ Ֆաթման քեզի է :»

Հաղիւ կը համարձակէի զգայարանացս հա-

ւատալ, չէի կրնար ուրախութիւնս բացատրել :

«Այո, բարեկամս, շարունակեց վաճառականն, քո խոհեմութիւնդ կատարեւրապէս փորձեցի. յաղթական եղաւ, եւ Ֆաթման քեզ կուտամ ապահով ըլլալով որ զայն երջանիկ պիտի ընես : Իրաւ է, աւելի մեծ խնամութիւն մը կը պատրաստէի իրեն համար » Պէլուչիութանի իշխաններէն մին զայն կնութեան խընդրերէ կը ինձմէ : Բայց մանրակրկիտ հետազոտութեամբ խնացայ որ անձնատուր եղած է ծայրայեղ ափսոսի եւ աղքիկ ամենեւին չը պիտի ըլլայ կին այնպիսի մարդու մը որ կատաղի խենթ է օրին կէսը եւ թաղծեալ ապուշ մը միւս կիսուն : Բան մը չ'ունիմ վախճալու այդ կուսակալին ցասմանէն, որովհետեւ կարող բարեկամներ ունիմ փոխարքային քով որ զայն պիտի պարտաւորէ խօսք հասկնալու եւ անտրտունջ ենթարկուելու այս գրկման որուն այնչափ արժանացած է : Արդ, Սալահէտտին, ունի՞մ ուրիշ առարկութիւն մը տեսնելու համար կալաջներուն տօնն : »

Պատասխանեցի միայն լցնալով վաճառականին ոտքն եւ համբուրելով նորա ծունկերն : Կակաջներուն տօնն եկաւ, եւ այն օրն կարգուեցայ սիրուն Ֆաթմային հետ Սիրուն Ֆաթման, այնպէս կը շարունակեմ կոչել զայն, թէպէտեւ կինս է քանի մը տարիէ ի վեր : Սըրտիս ուրախութիւնն եւ պարծանքն է, եւ մեր փոխադարձ սէրէն աւելի երջանկութիւն զգա-

ցած եմ քան բոլոր կեանքիս ուրիշ պարտաւորներէն զորս բաղդաւոր կոչած են :

Իւր հայրն ինձ տուաւ հիմակուան բնակած տունս, եւ իւր ստացուածքն մերիններուն վրայ աւելցուց, այնպէս որ բաղձանքէս ալ աւելի հարստութիւն ունիմ : Սակայն հարստութիւնս զիս կարող կ'ընէ դիւրելու ուրիշներուն կարիքը, ուստի եւ չեմ կրնար կեղծել թէ զանոնք կ'անարգեմ : Համոզելու եմ Մուսա եղբայրս որ զանոնք ինձ հետ վայելէ, եւ մունայ իւր տարաբաղդութիւններն : Այն ատեն ինքզինքս բոլորովին երջանիկ պիտի սեպեմ : Գալով բամբշան հայելայն եւ քո կոտրած անօթիդ, սիրելի եղբայրս, շարունակեց Սալահէտտին, բան մը մտածելու ենք . . . :

«Այլ եւս մի մտածեք բամբշան հայելայն կամ կոտրած անօթին համար. գոչեց Սուլթանը, մէկդի թողլով իւր վաճառականի հաշուստը, եւ ինքզինքը ցըցունելով իւր իշխանական պատմութեանս : Սալահէտտին, ուրախ եմ քու չրթունքներէդ ըսելով կենացդ պատմութիւնն :

Կը հասկնամ արդ՝ պաշտօնեայդ իմ՝ որ կը սխալէի կարծեացս մէջ, շարունակեց Սուլթանն իւր Վէզիրին դառնալով :

Կը ճանչնամ թէ Սալահէտտին բաղդաւորին եւ Տարաբաղդն Մուսայի պատմութիւնն, քու կարծիքիդ համաձայն են, եւ թէ խոհեմութիւնն աւելի գործ կը տեսնէ քան թէ բաղդը մարդկային գործոց մէջ :


Սալահէտտինի յաջողութիւնն եւ երջանկութիւնը ծագած են յայտնապէս իւր խոհեմութենէն, այդ խոհեմութեամբ, Քապուլ գերծ մնաց հրդեհէ եւ սրածուծենէ: Եթէ Մուսա ունենար իւր եղբոր խոհեմութիւնն, չը պիտի գլուխը կորսնցունելու վտանգին ենթարկուէր ծախելով իւր չեփած նկանակներն. ջորւոյ մը կիցէն պիտի չը զարնուէր, կամ քանակոծուէր մատնի մը գտնելուն համար. ոչ ալ խումբ մը զօրքէ պիտի կողոպտուէր ոչ ուրիշ խմբէ մը պիտի զարնուէր, չը պիտի մոլորէր անապատի մը մէջ, կամ խարուէր հրէէ մը, նաւ մը չը պիտի դնէր այրելու վտանգին մէջ, ոչ ժանտախտիւ պիտի վարակէր և ոչ զայն պիտի ճարակեցնէր Հէրաթի մէջ. չը պիտի կոտորեր բամբջան հայլին զայն գող մը կարծելով ու վրան յարձակելով. չը պիտի հաւատար թէ իւր կենաց ճակատագիրն կախեալ էր Զինի անօթի մը վրայ գրուած մէկ քանի տողերէն. եւ վերջապէս չը պիտի կոտորէր այս թանկագին բժժանքը զայն տաք ջրով լուարով: Թող այսուհետեւ Տարաբաղըն Մուսան, Անխոնեմն Մուսան կոչուի. Թող Սալահէտտին Բաղդաւորն կոչուի Խոնեմն Սալահէտտին:»

Այսպէս խօսեցաւ վեհանճն իշխանը՝ իրաւունք տալով իւր զգօն եւ լրջամիտ պաշտօնէին:


Պատմութիւնը կը յաւելու թէ թագաւորը Սալահէտտինին առաջարկեց զայն կուսակալ

անուանել նահանգի մը, բայց Սալահէտտին խոհեմն մերժեց այն պատիւն ըսելով որ փառափրութիւն չ'ունէր, եւ բոլորովին երջանիկ էր իւր ներկայ կացութեան մէջ, եւ թէ այս այսպէս ըլլալով յիմարութիւն էր փոխելը՝ որովհետեւ մարդ աւելի երջանիկ չը կրնար ըլլալ: Չեն յիշատակուիր այնուհետեւ Անխոնեմ Մուսային սպառահած արկածք. միայն գիտենք թէ անհնար եղաւ իրեն ակիրոնի մոլութեան յաղթել եւ անոր ծայրայեղ կիրառութեան զոհ գնաց:

Վ Ե Ր Զ



№ 7333



Р. У.

№ 7333